Ազգ
Azg
4 ՓԵՏՐՈՒԱՐ 2012 ՇԱԲԱԹ 20(4872)
ISSN: 1829-1651

# Պանետտայի կարծիքով՝ Իսրայելն Իրանին կհարվածի գարնանը

ԱՄՆ պաշտպանության նախարար Լեոն Պանետտան կարծում է, որ Իսրայելը Իրանի միջուկային օբյեկտներին կհարվածի ապրիլ-մայիսին կամ հունիսին: Այդ մասին «Վաշինգտոն փոստ» թերթում գրում է մեկնաբան Դեւիդ Իգնասիուսը, որը նախարարի հետ մեկնել է Բրյուսել:

Պանետտայի խոսքերով՝ դեպքերի նման զարգացումը խիստ հավանական է: Իսրայելցիները վախենում են, որ Իրանը շուտով ստորգետնյա լաբորատորիաներում բավականաչափ ուրան կպատրաստի ռումբ արտադրելու համար: Դրանից հետո Թեհրանը կհայտնվի «իմունիտետի գոտում», եւ նրան կանգնեցնել կկարողանա միայն ԱՄՆ-ը: Մինչդեռ Իսրայելի վարչապետ Նաթանյահուն չի ուզում, որ իր երկրի ճակատագիրը կախված լինի Ամերիկայից:

Հրապարակման մեջ նշվում է, որ իսրայելցիները քննության են առնում կարճ՝ մոտավորապես հնգօրյա պատերազմի տարբերակը եւ ապա ռազմական գործողությունների դադարեցումը ՄԱԿ-ի միջնորդությամբ: Իսրայելը կարծում է, որ առաջին հարվածը մեծ վնաս չի պատճառի Իրանի միջուկային ծրագրին, ուստի մտադիր է մի քանի տարի հետո նոր հարված հասցնել:

Պանետտան եւ նախագահ Բարաք Օբաման ասում են, որ ԱՄՆ-ը դեմ է ռազմական գործողությանը: Վաշինգտոնի կարծիքով, միջազգային տնտեսական պատժամիջոցները արդեն արդյունք են տալիս: Սակայն Վաշինգտոնն առայժմ չի որոշել, թե ինչպես կվարվի, եթե Իսրայելը հարված հասցնի Իրանի միջուկային օբյեկտներին: Ամեն ինչ կախված կլինի Իրանի հակաքայլերից:

Ենթադրվում է, որ Իրանը կարող է հարվածել տարածաշրջանում տեղաբաշխված ամերիկյան զորքերին, ինչպես նաեւ փակել Հորմուզի նեղուցը՝ թույլ չտալով նավթի արտահանություն: ԱՄՆ-ը արդեն նախազգուշացրել է, որ չի հանդուրժի նեղուցի շրջափակում, որը բացասական հետեւանքներ կունենար համաշխարհային տնտեսության վրա:

# Պատճառ չէ, որ Ֆրանսիան հրաժարվի Սենատի որոշումից, առավել եւս՝ ընկրկի Թուրքիայի առջեւ

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատը ձայների գերակշռող մեծամասնությամբ ընդունեց ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: Ենթադրվում էր, որ հունվարի 30-ին օրինագիծը կներկայացվի Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին, նա կստորագրի, որից հետո կհրապարակվի պաշտոնաթերթում եւ օրենքի ուժ կստանա: Այդ դեպքում արդեն ենթակա չէր լինի Սահմանադրական դատարանում բողոքարկման:



Սակայն, հակառակ ենթադրության, հենց հունվարի 30-ին Սենատի ընդունած օրինագիծը 77 սենատորների ստորագրությամբ, որոնց միացել են նաեւ Ֆրանսիայի Ազգային ժողովի 65 պատգամավորներ, բողոքարկվեց Սահմանադրական դատարանում: Օրինագծի ընդունման առնչությամբ Ֆրանսիային եւ ֆրանսիացիներին ամոթանք տվող, իսկ նախագահ Սարկոզիին ամենաասանձարձակ արտահայտություններով անձնական վիրավորանք հասցնող Թուրքիայի ղեկավարների մռայլ դեմքը դրա բողոքարկման պարագայում միանգամայն պայծառացավ:

Ինչպես թուրքական լրատվամիջոցներն են նշել, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքը, նկատի ունենալով օրինագծի բողոքարկման դիմումը, դա բնութագրել է որպես խոսքի ազատության սկզբունքին հետամուտ լինելու դրսեւորում եւ դրական զարգացում:

Դրա առնչությամբ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ասել է. «Համոզված եմ եւ հույսով, որ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը ողջամտություն կդրսեւորի եւ կհանգի այնպիսի եզրակացության, ինչը չի հակասի Ֆրանսիայի արժեքներին, Եվրոմիության սկզբունքներին եւ խղճի խայթ չի առաջացնի»:

Համենայն դեպս, Ֆրանսիայի Սահմանադրական դատարանն ընդունել է բողոքարկման դիմումը: Հետեւաբար 30 օրվա ընթացքում նա կամ պետք է մերժի դիմումն ու օրենքի ուժ ստանա օրինագիծը, կամ բողոքն ընդունի եւ չեղյալ հայտարարի Սենատի որոշումը, կամ էլ փոփոխություն մտցնի օրինագծի տեքստում, որ ելման կետ վերադարձնի օրինագծի ընդունման գործընթացը:

Տես էջ 5

# Կալանավորվել է լրագրող Հայկ Գեւորգյանը



Երեկ լրագրողական հանրությունը ցնցվեց այն լուրից, որ առավոտյան աշխատանքի գնալիս «Հայկական ժամանակ» օրաթերթի թողարկման պատասխանատու, լրագրող Հայկ Գեւորգյանին քաղաքացիական հագուստով ինչ-որ մարդիկ տարել են ոստիկանության կենտրոնական բաժին:

«**Ազգը**» փորձեց ոստիկանության լրատվության վարչությունից տեղեկանալ, թե ի՞նչն է պատճառ հանդիսացել Հայկ Գեւորգյանին ոստիկանության բաժին տանելուն եւ ի՞նչ հիմքերով: Մեր հարցին պատասխանեցին, որ դեռ հունվարի 23-ից Հայկ Գեւորգյանը հետախուզման մեջ է եղել ու նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 1-ին մասի եւ 244-ի հոդվածների հատկանիշներով, որով նախատեսվում է առավելագույնը 3 տարի ազատազրկում: Կեսօրին արդեն Հայկ Գեւորգյանին տեղափոխել էին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ հունվարի 13-ին վրաերթ կատարելու եւ դեպքի վայրից փախուստի դիմելու փաստի առթիվ:

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը երեկ երեկոյան հրավիրած ասուլիսում հայտարարությամբ է հանդես եկել, որ՝ Հայկ Գեւորգյանին կալանավորելը ուղղված է արդարությունը ջրի երես հանող եւ անարդարությունները չքողարկող լրագրողի դեմ: Ն. Փաշինյանը համոզված է, որ «Հայկի կալանավորման որոշումը ոստիկանապետ Վովա Գասպարյանը կայացրել է «իր շեֆի» իմացությամբ»: Իսկ թե ո՞վ է այդ շեֆը հարցին՝ ասել է. «Սերժ Սարգսյանը, նաեւ՝ ուրիշը...»:

Ըստ Փաշինյանի, ոստիկանության կողմից մինչեւ երեկ երեկո ներկայացված փաստարկները անհիմն են ու սարքովի: «Մենք մինչեւ վերջ պայքարելու ենք արդարությունը վեր հանելու համար...», ասել է նա:

Երեկ ուշ երեկոյան լրագրողների հետ ոստիկանությունում հանդիպեց նաեւ քննչական գլխ. վարչության բաժնի պետ Արսեն Այվազյանը եւ տվեց քր. գործի հետ կապված որոշ պարզաբանումներ: Հունվարի 13-ին, ժամը 17:30-ի մոտ Երեւանի Սիլվա Կապուտիկյան փողոցի թիվ 8 շենքի դիմաց «ՎԱԶ-21214» մակնիշի 19 OL 158 պետհամարանիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել Արոս Ֆրանգուլյանին, որն էլ պատահական մեքենայով տեղափոխվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն (տուժողը քաղաքի կենտրոնից ինչո՞ւ է մինչեւ Նոր-Նորքի հիվանդանոց տեղափոխվել-Մ. Մ.):

Դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ՝ պատճառվել է միջին ծանրության վնասվածք (ձախ ծնկոսկրի կոտրվածք), առողջության տեւական քայքայումով: Հունվարի 23-ին դատարանի վճռով Հայկ Գեւորգյանին բերման ենթարկելու վճիռ է կայացվել ու նույն օրը նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել եւ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Այվազյանը նշեց, որ նախաքննության գաղտնիությունից ելնելով շատ մանրամասնություններ չի հայտնելու եւ չպատասխանեց լրագրողների հարցերին: Տեղեկացրեց, որ Հայկ Գեւորգյանը իրավունք ունի կալանավորման օրվանից սկսած երեք օրվա ընթացքում դիմել դատարան՝ վիճարկելու քր. հայցը, իսկ թե կալանավորումը կմնա՞ ուժի մեջ, թե՞ ոչ, կորոշի դատարանը:

Սպասենք մինչեւ լրագրող Հայկ Գեւորգյանը պարզաբանումներ մտցնի այս հակասական տվյալներ պարունակող գործում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

*Հ. Գ. Նշենք, որ կառավարության վերջին նիստը լուսաբանելու համար Հայկ Գեւորգյանը իր հարցերն էր հղում նախարարներին ու այդ թվում նաեւ ոստիկանապետին: Եթե հետախուզման մեջ էր հունվարի 23-ից, ի՞նչ է, նրան չէի՞ն ճանաչում կամ թերթի տեղը չգիտեի՞ն...*

# Անչափահասների հանցագործությունները շատացել են



527 հանցագործություն 453 անչափահասի կողմից: Ի տարբերություն 2010-ին արձանագրված սպանության 3 դեպքերի, նախորդ տարի սպանության դեպք չի արձանագրվել: Կողոպուտի դեպքերը 26-ն են: Արձանագրվել է սեռական բռնության 60, մարմնական վնասվածքների՝ 54, գողության՝ 318, թրաֆիքինգի՝ 5 դեպք: Ներկայացված թվերն անցյալ տարի անչափահասների կատարած հանցագործությունների ամփոփ պատկերն է՝ ներկայացնում է քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ, անչափահասների գործերով բաժնի պետ, ոստիկանության գնդապետ **Նելլի Դուրյանը**: Նա հավաստիացնում է, որ ոստիկանության համապատասխան վարչության աշխատակիցների ուշադրության կենտրոնում շարունակում է մնալ հրապարակ ու արդիական մնալ մուրացկան երեխաների խնդիրը: Այսօր հանրապետությունում կա 16 մուրացիկ երեխա նախորդ տարվա 20-ի փոխարեն: Այս հարցում Դուրյանն ակնհայտ առաջխաղացում է նկատում, որովհետեւ տարիներ առաջ հանրապետությունում հաշվառված էր 300 մուրացիկ երեխա: Երեխաներին փողոցից ու մուրացկանությունից կտրելու համար գնդապետը շատ է կարեւորում ծնողների դերն ու աջակցությունը:

Տես էջ 2

# Ովքեր են խոշոր հարկատուների առաջին տասնյակում

Պետական եկամուտների կոմիտեն երեկ հրապարակել է 2011-ին Հայաստանի խոշոր հարկատուների ցանկը: Այն գլխավորում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը»՝ 29,7 մլրդ դրամ վճարած հարկերով, որից գրեթե 16 մլրդ դրամը ուղղակի հարկերն են՝ շահութահարկ եւ եկամտահարկ: Ընկերությունն ավելի քան 12 մլրդ դրամով ավելի հարկեր է վճարել 2010-ի համեմատ եւ տարիների դադարից հետո կրկին գլխավորել խոշոր հարկատուների ցանկը:

Երկրորդ տեղում է «Հայռուսգազարդը»՝ 21,8 մլրդ դրամ վճարած հարկերով: Անցյալ տարի հենց «Հայռուսգազարդն» էր խոշոր հարկատուների ցանկի առաջին տեղում: Այդուհանդերձ, ընկերությունն այս տարի մոտ 5 մլրդ դրամով ավելի հարկեր է վճարել:

Երրորդը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի առաջատար «Ղ-Տելեկոմ» («ՎիվաՍել-ՄՏՍ») ընկերությունն է, որի վճարած հարկերը կազմել են 17,7 մլրդ դրամ: Շահութահարկն ու եկամտահարկը կազմել են մոտ 7 մլրդ դրամ: Ընկերությունը 2010-ի համեմատ 4 մլրդ դրամ ավելի է վճարել եւ բարձրացել 1 հորիզոնականով:

Չորրորդը «Ալեքս Գրիգ» ընկերությունն է՝ դարձյալ 17,7 մլրդ դրամ վճարած հարկերով: Պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող ներմուծող խոշորագույն ընկերությունն անցյալ տարվա համեմատ ավելի է վճարել մոտ 2 մլրդ դրամ, բայց ուղղակի հարկերի գծով նրա վճարները շարունակում են չնչին մնալ՝ մոտ 887 մլն դրամ:

Հինգերորդը «Արմենտել» ընկերությունն է՝ 12,5 մլրդ դրամ վճարած հարկեր, որը մոտ 2 մլրդ դրամով պակաս են նախորդ տարվա ցուցանիշից: Վեցերորդը վառելիք ներմուծող «Սիթի պետրոլ գրուպն» է՝ 10,5 մլրդ դրամ վճարած հարկերով, յոթերորդը՝ վառելիք ներմուծող մյուս խոշոր ընկերությունը՝ «Ֆլեշը», 10,3 մլրդ դրամ, ութերորդը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցերը»՝ 9,6 մլրդ դրամ, իններորդը՝ «Ֆիլիպ Մորիս Արմենիան»՝ 6,3 մլրդ դրամ, տասներորդը՝ «Արմենիա միջազգային օդանավակայանները»՝ 6,3 մլրդ դրամ:

Ա. Մ.

# Ընթացիկ

## «Եվրոնեսթում» Հայաստանի պատվիրակության ղեկավար. «Ադրբեջանում մարդու իրավունքների հիմքերն են խարխլված ընդհանրապես»

Արեւելյան գործընկերության «Եվրոնեսթ» խորհրդարանական վեհաժողովում հայկական պատվիրակության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը** երեկ լրագրողներին մանրամասներ հաղորդեց Բրյուսելում տեղի ունեցած նիստերի ու քննարկումների մասին: Այնտեղ տնտեսական ինտեգրացիայի, էներգետիկ անվտանգության եւ քաղաքական հարցերի հանձնաժողովների նիստերն էին, իսկ սոցիալական, մշակութային եւ կրթական հարցերի հանձնաժողովի նիստը կայանալու է Երեւանում՝ երեք շաբաթ հետո, որն, ի դեպ, «Եվրոնեսթի» առաջին արտագնա նիստն է լինելու. մինչ հիմա բոլոր միջոցառումներն անց են կացվել Եվրոմիության սահմաններում: Պրն Հովհաննիսյանը գոհունակություն հայտնեց թե՛ հայկական պատվիրակության ակտիվ աշխատանքից եւ թե՛ ԵՄ խորհրդարանական խմբի արդյունավետ գործունեությունից: Վահան Հովհաննիսյանի գնահատմամբ՝ հայկական պատվիրակության վրա մեծ ճնշում կա, այն լինելու է շարունակական եւ դրան պետք է պատրաստ լինեն հաջորդ պատվիրակությունները: Տնտեսական հանձնաժողովում Ադրբեջանը Հայաստանի տնտեսական դժվարությունները փորձել է հիմնավորել ղարաբաղյան հակամարտության եւ Ադրբեջանի հետ փակ սահմանի հանգամանքով: Վ. Հովհաննիսյանը կարեւոր համարեց քաղաքական հարցերի հանձնաժողովում հնչած եւ Ադրբեջանին ուղղված այն միտքը, որ էներգետիկ նշանակության հարցերը սկսում են գերակշռել արժեքային հարցերին: Հովհաննիսյանը ներկայացրեց ժողովրդավարության վիճակի գնահատականները՝ տրված Հայաստանին ու Ադրբեջանին: Հայաստանի համար նշվել է, որ ժողովրդավարությունը դանդաղ է զարգանում, դեռ զգալի է կոռուպցիայի մակարդակը: Ադրբեջանի պարագայում չեն խոսել առանձին խնդիրների մասին, քանի որ այնտեղ «մարդու իրավունքների հիմքերն են խարխլված ընդհանրապես»:

Հանձնաժողովի նիստերից բացի՝ պատվիրակությունը մասնակցել է նաեւ խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստին, որտեղ, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են Հայաստանի եւ Ադրբեջանի մասին Եվրոխորհրդարանի նախնական զեկույցները: Կրկին համեմատության մեջ՝ պրն Հովհաննիսյանը նշեց Հայաստանին վերաբերյալ զեկույցը, որը ներկայացրել է պատգամավոր Թոմաշ Պորեբան, դրական ուրվագծեր է ունեցել, ինչը չի կարելի ասել Յա Տեմյակիի պատրաստած՝ Ադրբեջանի զեկույցի մասին: Սա առաջացրել է ադրբեջանամետ լոբբիստների զայրույթը: Նրանք մասնավորապես դժգոհել են Հայաստանի իրավական համակարգից, ինչպես նաեւ մասնացույց արել Ռուսաստանի դաշնակիցը լինելու հանգամանքը, հնչեցրել ակնհայտ հակահայկական ելույթներ: «Եվրոնեսթում» նաեւ եղել են հօգուտ Հայաստանի ելույթներ, մասնավորապես հանձնաժողովի եզրակացության տեքստում ղարաբաղյան հակամարտությունը ներառելու՝ ադրբեջանական կողմի առաջարկը դիմադրության է արժանացել եւ մերժվել: Վահան Հովհաննիսյանը կարեւոր համարեց Եվրոխորհրդարանի պատգամավորների այն հիմնավորումները, որ Եվրախորհրդարանն այդ հարցին չպետք է միջամտի: Այս մասին հաղորդել է Ազգային ժողովի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը, որն, ի դեպ, նոր ղեկավար ունի՝ «Արմենպրեսի» նախկին տնօրեն Հրայր Զորյանը:

## Սուրբ Սարգսի տոնը Շիրակում

*2012-ը՝ չմկրտվածների մկրտության տարի*

**Հայ եկեղեցու Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի երիտասարդական բաժինը եւ թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միությունը մի շարք միջոցառումներ են կազմակերպել՝ նվիրված Սուրբ Սարգսի տոնին: Դրանք մեկնարկել են դեռ երեկ՝ Գյումրու Սբ Աստվածածին (Սբ Յոթվերք) եկեղեցում կատարված երեկոյան ժամերգությունից հետո: Առաջին օրվա ծրագրում ներառված էին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանի կողմից երիտասարդների օրհնության կարգ, նրանց աղի բլիթների, շնորհավորական բացիկների բաժանում ու անակնկալներ, նաեւ՝ մկրտության խորհրդանշական արարողություն: Վերջինս յուրատեսակ կոչ է բոլոր չմկրտված շիրակցիներին՝ այս տարի շտկել բացթողումը, որի համար 2012 թվականը Շիրակի թեմի առաջնորդի կողմից հայտարարվում է մկրտության տարի:**



**Այսօր՝ բուն տոնի օրը, առավոտյան ժամերգությունից հետո կկազմակերպվի երիտասարդների խաչերթ դեպի Գյումրու Սուրբ Սարգիս մատուռ, որտեղ տեղի կունենան պատարագ եւ տոնակատարություն: Հոգեւոր տոնին նվիրված միջոցառումներ կանցկացվեն մարզի նաեւ առանձին այլ համայնքներում:**

**Գ. Մ.**

## Ձյունառատ եւ սահուն մայթեր



Վերջին 3 օրերին մեր հանրապետության տարածքում չէին դադարում ձյան տեղումները: Այսպիսի առատ ձյուն այս տարի առաջին անգամ տեղաց եւ լրացուցիչ խնդիրներ ստեղծեց մեր առանց այն էլ բազմազբաղ քաղաքապետարանի համար: Գլխավոր փողոցները նրանց հաջողվեց մաքրել, ավելի ճիշտ՝ մայթերին լցնել փողոցի ձյունը: Իսկ հետիոտների մասին ինչ-որ մեկը մտածե՞լ է: Դե իհարկե, այդ սառցապատ մայթերով օլիգարխները չեն քայլի, կարեւորը նրանց մեքենաների ճանապարհը ազատ ու մաքուր լինի:

Ճանապարհային ոստիկանները գիշերային աշխատանքի շնորհիվ անցնող օրերին կարողացան զգոն պահել վարորդներին, ինչը գովելի է: Քաղաքի լույսերն էլ վառ էին անցած գիշերներին: Այս հանգամանքներն իհարկե իրենց դերը խաղացին եւ, հավանաբար, պակասեցրին ավտովթարների կանխատեսելի թիվը:

Ձյան ճնշմանը չէին դիմացել Մաշտոցի պողոտայի լուսակիրների հոսանքալարերը, ինչի հետեւանքով երթեւեկությունը երեկ խանգարվել էր:

Այնուամենայնիվ օդերեւութաբանները հուսադրում են, որ փետրվարի 4-ից ձյան տեսքով տեղումներ չեն սպասվում, ինչի առիթով ցանկանում եմ շնորհավորել քաղաքապետարանին:

**ԱՐՍԵՆ ՇԻՐՎԱՆՅԱՆ**



## Շիֆն ու Բերմանը Սաակաշվիլու ուշադրությունն են հրավիրել Սամցխե-Ջավախեթիի վրա

**Վրաստանի նախագահի բավականին երկար նախապատրաստություն ունեցած այցելությունը Միացյալ Նահանգներ, հանդիպումը ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ օրակարգային տարբեր հարցերի կարեւորություն շեշտադրելու տեղիք ու հնարավորություն տվեց, միեւնույն ժամանակ ակնհայտ դարձնելով, որ տարածաշրջանում ամերիկյան շահերի առնչությամբ որոշակի փոփոխություններ կարելի է ակնկալել:**

**Ինչեւէ, առավել հետաքրքրական է, որ ամերիկյան հողում Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին բավականին առաս է գտնվել խոսումներ ու գնահատականներ տալուց, անգամ անդրադառնալով Վրաստանի հայաբնակ տարածքների խնդիրներին: Մասնավորապես, Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի անդամներ Ադամ Շիֆն ու Հովարդ Բերմանը, ըստ Շիֆի անձնակազմի ղեկավարի տարածած հաղորդագրության, Սաակաշվիլու հետ հանդիպմանը նախագահին խնդրել են առավել մեծ ուշադրություն դարձնել «հայկական Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանին, որ սահմանակցում է Հայաստանի Հանրապետությանը»:**

**Շիֆն ու Բերմանը Սաակաշվիլու հետ քննարկել են ամերիկա-վրացական հարաբերությունները, ինչպես նաեւ Ջավախքի առնչությամբ նշել, որ այդ տարածաշրջանը վրացական մյուս տարածաշրջաններից բավականին հետ է մնում տնտեսական հնարավորությունների, կրթության եւ զարգացման առումով: Սաակաշվիլին իր հերթին «պատրաստակամություն է հայտնել» աշխատելու Շիֆի եւ Բերմանի հետ՝ «առավել շատ ռեսուրսներ ուղղելու Սամցխե-Ջավախեթի», ընդ որում, Սաակաշվիլին հաստատել է, որ ամբողջությամբ կաջակցի ամերիկյան որեւէ օժանդակության այդ տարածաշրջանին:**

**«Շատ հաճելի քննարկում էր նախագահի հետ», հանդիպումից հետո ասել է Ադամ Շիֆը: Բերմանն, իր հերթին, նշել է, որ կշարունակի պայքարել Վրաստանում հայ համայնքի համար արդար վերաբերմունքի եւ հավասար իրավունքների համար:**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Տարոն Մարգարյանը Ճարտարապետության եւ շինարարության համալսարանի խորհրդի նախագահ

Փետրվարի 3-ին Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանում կայացավ համալսարանի խորհրդի նիստ: Երեւանի քաղաքապետ **Տարոն Մարգարյանը** ընտրվեց համալսարանի խորհրդի նախագահ:

ԵՃՇՊՀ ռեկտոր **Հովհաննես Թոքմաջյանը** ներկայացրեց 2011-ի աշխատանքների հաշվետվությունը, որում կարեւորեց հակակոռուպցիոն ռիսկերի նվազմանն ուղղված ծրագիրը:

Խորհուրդը դրական գնահատեց 2011-ին իրականացված աշխատանքները եւ հաստատեց համալսարանի 2012-ի բյուջեն:

**ԵՃՇՊՀ լրատվական ծառայություն**

## Անչափահասների հանցագործությունները շատացել են

*1-ին էջից*

Նա շեշտում է, որ ներկայիս ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը հրավիրել է խորհրդակցություն անչափահասների գործերով բոլոր աշխատակիցների մասնակցությամբ եւ նրանց տվել մի հրահանգ. հիմնական ուշադրությունը սեւեռել դպրոցներին եւ հաճախակի այցելություններ կատարել դպրոցներ, հանդիպումներ կազմակերպել մանկավարժների եւ աշակերտների հետ: Դուրյանը շեշտում է, որ մեր դպրոցականները երբեմն չեն կարողանում կրքերը զսպել, խոսքով հասկացնել, եւ հարցերը լուծվում են բռունցքների կամ սուր կտրող գործիքների միջոցով:

Այսօր ծանր հանցագործություններ կատարելու համար Աբովյանի քրեակատարողական հիմնարկում է գտնվում 16 պատանի: Դուրյանի խոսքերով՝ մեղմ հանցագործություն կատարած անչափահասների նկատմամբ կիրառվում են այլընտրանքային պատժամիջոցներ: Անչափահասների շրջանում մարմնավաճառության դեպքերը շատ քիչ տոկոս են կազմում: Գնդապետի ներկայացմամբ՝ այլ հարց է վարքի շեղում ունեցող աղջիկների խնդիրը, ովքեր հանդիպում եւ սեռական հարաբերություններ են ունենում բազմաթիվ տղաների հետ: Անչափահասների շրջանում արձանագրված ինքնասպանության դեպքերի թվաքանակը նույնպես մտահոգիչ է: 2011-ին արձանագրվել է ինքնասպանության 45 դեպք, որից 9՝ մահվան ելքով: 2010-ին արձանագրվել էր 41 դեպք՝ 13 մահով: Ինքնասպանություն հիմնականում գործում են 15-17 տարեկան աղջիկները: Պատճառները տարբեր են՝ անպատասխան սեր, ընտանեկան խնդիրներ եւ չհասկացվածություն: Դուրյանի խոսքերով՝ հետեւողական աշխատանք է տարվում նաեւ կիբեռհանցագործությունների ուղղությամբ: 2011-ին կիբեռհանցագործության դեպք չի արձանագրվել, 2010-ին մանկական պոռնոգրաֆիայի դեպք է հայտնաբերվել:

**Հ. Հ.**


«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի



Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:



"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# «Ժառանգության» համագումարը՝ մարտի 2-ին



«Ժառանգության» համագումարը պետք է ծանրութեթեւ անի, թե որքանո՞վ ենք մենք գտնվում ազատ եւ արդար եւ իրավական ընտրությունների նախաշեմին, որտեղ ընտրություններից հետո ո՛չ իշխանավորը, ո՛չ ընդդիմադիրը, ո՛չ հաղթողը, ո՛չ պարտվողը, ո՛չ ԿԸՀ արդյունք ընդունողը, ո՛չ հրապարակում գիշերողը չդժգոհի, այսինքն՝ իմանանք, թե ո՞րոնք են խաղի կամ կյանքի կանոնները Հայաստանի քաղաքական երկնակամարում», ասաց **Րաֆֆի Հովհաննիսյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանը՝ հայտարարելով, թե «Ժառանգության» համագումարը տեղի կունենա մարտի 2-ին: Ինչպես տեսնում եք՝ մարտի սկզբին շատ քաղաքական ուժեր են նախատեսում համագումար անել, այնպես որ մարտը հավանաբար նախընտրական հստակեցումների, «ո՞վ ում հետ» ամիս կլինի: «Ժառանգությունն» այդ օրը կորոշի առաջիկա ընտրական գործընթացներին մասնակցության ձեւ ու չափի հարցը, իսկ նախահամագումարյան շաբաթների ընթացքում այս խորհրդարանական ուժը որոշելու է, թե իր մասնակցությունն ինչպե՞ս է կիրարկելու, հասարակության պահանջը ո՞րն է եւ արդյոք միայն օրակարգո՞ւմ է Ազգային ժողովում կրկին հայտնվելը. «Մենք ուզում ենք հավատալ եւ հավատում ենք, որ ՀՀ-ն գտնվում է լուրջ փոփոխությունների նախաշեմին, եւ այս անգամ «Ժառանգությունը» պարտավոր է մաս կազմել համակարգափոխական շարժման թե՛ Ազգային ժողովում, թե՛ հրապարակում»: Նա ողջունեց համաձայնության հանգող թեկուզ ուշացած գործընթացը համամասնական կարգի շուրջը, թեեւ նա ինքը ծնվել է մեծամասնական կարգ ունեցող երկրում, բայց Հայաստանը այդ կարգին կհանգի միայն 50 տարի հետո: Ըստ նրա՝ շատ լավ կլիներ, որ գործող նախագահը հանդիպեր ՀՅԴ-ի, ՀԱԿ-ի, «Ժառանգության» ներկայացուցիչների եւ այլ շահագրգիռ ուժերի պատվիրակների հետ, քանի քաղաքական մշակույթի իրական դրսեւորումն այդ կլիներ. «Եթե քաղաքական կամքը կա եւ ՀՀ պատմության ողջ ընթացքում առաջին անգամ հայավայել, սահմանադրական, իրավական ընտրություն ենք ուզում, ապա պետք է շատ լրջորեն մոտենանք այդ հարցին»:

«Ժառանգությունը» շարունակելու է շփումներն ինչպես «Ազատ դեմոկրատներ» կուսակցության, այնպես էլ այլ կուսակցությունների, հասարակության ներկայացուցիչների, քաղաքացիական խմբերի հետ՝ հույս ունենալով մինչեւ մարտի 2-ը ամբողջացած ուժ ձեւավորել: Նախկին երեք արտգործնախարարների հանդիպման մասին մամուլի լուրին արձագանքելով՝ Ր. Հովհաննիսյանը նկատեց, թե այդպիսի հանդիպում չի եղել, ինքը չի հանդիպել պարոն Օսկանյանին եւ չգիտե նրա մտքինը, բայց. «Մեր դռները բաց են, եթե նա կամ մեկ այլ ցանկացած շահագրգիռ ուժ ուզում է համագործակցության եզրեր քննարկել, մենք բաց ենք, եւ կոնկրետ ես հաճույքով կհանդիպեի նրա հետ: «Ժառանգությանը» հետեւելով կիմանաք, որ մենք հիշաչար չենք, հավատաքննիչ չենք, մենք համարում ենք, որ ՀՀ ազատության եւ ինքնիշխանության ապագան գտնվում է նոր բանաձեւի որոնման մեջ», ասաց՝ հավելելով, թե քննադատելով, արժանական ընդդիմություն լինելով Հայաստանի երեք նախագահներին, պատրաստ է համագործակցել Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու հետ նոր մոտեցման նպատակներն իրականացնելու համար: Նա չհերքեց, որ համամասնական համակարգի հարցով հանդիպելու են բազմաթիվ կուսակցությունների հետ, նաեւ փոխադարձ շահագրգռվածություն կա ավելի լայն օրակարգի՝ ընդդիմադիր, արտախորհրդարանական, եւ եթե ցանկություն լինի, ինչու չէ, իշխանության մաս կազմող կուսակցությունների հետ, եթե իրենք իսկապես ուզում են, որ Հայաստանում առաջիկա ընտրությունները լինեն համընդհանուր ընդունելի, ընկալելի եւ դե յուրե քաղաքական արդյունք առաջարկող. «Մենք պետք է որոշենք, որ այս անգամ ՀՀ-ն պետք է ունենա քաղաքական դե յուրե արդյունք. ոչ թե դե ֆակտո, այլ դե յուրե ընտրված Ազգային ժողով ունենանք, եւ Հայաստանի 4-րդ նախագահը լինի բոլորովին նոր մարդ, նոր անձ՝ դե յուրե ընտրված հայ ժողովրդի կողմից»:

Ր. Հովհաննիսյանը «Ազատ դեմոկրատներին» բնորոշեց հավաքական, կոլեգիալ որոշումներ ընդունելու պատրաստ ուժ, որտեղ չկա անձի պաշտամունք, կա խորհրդարանական կառավարման մոդելի կողմնակցություն, համամասնականի կարգի զորակցություն:

«Ժառանգության» համամասնականի ցուցակը կազմելու հարցի մասին խոսելը ժամանակից շուտ է, քննարկում չի եղել այդ առթիվ, ինչպես որ նախընտրական տարբի հարցը:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# Քաղցկեղով հիվանդների թիվն ավելանում է ամբողջ աշխարհում

Քաղցկեղը բուժելի հիվանդություն է, եթե վաղ է հայտնաբերվում, իսկ վաղ հայտնաբերման համար պետք է պարբերաբար ստուգումների գնալ: Սա ուռուցքաբանների, ընդհանրապես, բժիշկների խորհուրդն է, իսկ բացատրությունը հետեւյալն է՝ հիվանդության կանխարգելումն ավելի հեշտ է ու հավանական, քան բուժումը:

Փետրվարի 4-ը քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրն է, աշխարհում այս օրը սկսել են նշել 2005 թվականից: Սակայն քաղցկեղի դեմ պայքարի մասին պետք է խոսել ոչ միայն այսօր, այլեւ շատ հաճախ, քանի որ քաղցկեղով հիվանդների թվի ավելանալը հրատապ խնդիր է ամբողջ աշխարհում:

Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն **Հայրապետ Գալստյանն** ընդգծում է, որ աշխարհում տարեկան 2-4 տոկոսով ավելանում է չարորակ ուռուցքներ ունեցողների թիվը: Եթե Հայաստանում 1995 թվին գրանցվել է չարորակ ուռուցք ունեցող 4705 հիվանդ, ապա 2010-ին այդ թիվը հասել է 7984-ի: Եվ հիմա քաղցկեղի դեմ պայքարը դարձել է ոչ միայն առանձին երկրների, այլեւ միջմայրցամաքային խնդիր, ուստի ստեղծվել են «Եվրոպան քաղցկեղի դեմ», «Եվրասիան քաղցկեղի դեմ» ու նմանատիպ ուրիշ միություններ:

Ուռուցքաբանության ազգային կենտրոնի փոխտնօրեն **Գագիկ Բազիկյանն** ասում է՝ մարդիկ, ում մոտ հայտնաբերվել է քաղցկեղ, ամբողջ կյանքում գտնվում են մասնագետների հսկողության ներքո, նույնիսկ նրանք, ովքեր արդեն բուժված են լինում: Հիմա հսկողության ներքո գտնվողների թիվը կազմում է շուրջ 32 հազար, որից 15 հազարն արդեն բուժվել են, ինչը, ըստ պարոն Բազիկյանի, ապացուցում է՝ քաղցկեղը հնարավոր է բուժել, եթե հայտնաբերվում է սկզբնական փուլում:

Իսկ Հայաստանում ո՞ր օրգանների քաղցկեղն է ավելի շատ տարածված, պատասխանելով «**Ազգի**» հարցին՝ Հայրապետ Գալստյանը նշում է՝ ամենատարածվածը թոքերի, ապա կրծքագեղձի քաղցկեղն է, ավելացել է եւ շագանակագեղձի քաղցկեղով հիվանդացության ցուցանիշը:

Պարոն Գալստյանն ընդգծում է, որ թոքերի քաղցկեղով հիվանդացության ավելանալը պայմանավորված է եւ ծխելու հանգամանքով, իսկ Հայաստանն ամենաշատ ծխող երկրների մեջ առաջիններից է: «Ոչ միայն թոքերի, այլեւ կոկորդի, կերակրափողի, անգամ միզապարկի քաղցկեղի առաջացումն է կապված նաեւ ծխելու հետ»:

Թեեւ Հայաստանը նույնպես ունի հակածխախոտային օրենք, սակայն պատժիչ միջոցները արդյունավետ չեն, իսկ պայքարը՝ ոչ հետեւողական: Պարոն Գալստյանը մեջբերում է Միացյալ Նահանգների փորձը, որտեղ հետեւողական պայքարի արդյունքում՝ ընդհուպ տուգանքների հասնող, թոքի քաղցկեղի հաճախականությունը 11-12 տոկոսով նվազեց:

Երեկ «Նովոստի» մամուլի կենտրոնում պարոն Գալստյանը նաեւ տեղեկացրեց, որ առողջապահության նախարարությունը մշակում է հակաքաղցկեղային պայքարի ծրագիր, քննարկումների ավարտից հետո ծրագիրը կներկայացվի կառավարության հաստատմանը:

**Ի. Պ.**



# Մայք Խարապյանը ներողություն է խնդրել վարչապետից

*Երեկ ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը «Տիգրան Սարգսյանն ընդունել է «ՌԱԿ Կենտրոնական վարչության ատենապետ Մայք Խարապյանին» վերնագրի ներքո հետեւյալ մամլո հաղորդագրությունը տարածեց նախորդ օրը ՀՀ վարչապետի մոտ կայացած ընդունելության մասին: Հաղորդագրությունը հրապարակում ենք նույնությամբ, մեր մեկնաբանությունները վերապահելով մեր առաջիկա համարներից մեկին: Հիշեցնենք միայն, որ Մ. Խարապյանի «կուսակիցներից մեկի» ակնարկությունը վերաբերում է ՀՌԱԿ նախկին ատենապետ, նույնինքն Մ. Խարապյանի գլխավորած վարչության փոխատենապետ, տխրահռչակ Հարություն Առաքելյանին:*

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** փետրվարի 2-ին ընդունել է Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ **Մայք Խարապյանին** եւ ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչության ատենապետ **Հարություն Երկանյանին**: Ողջունելով սփյուռքահայ գործիչներին՝ վարչապետը նշել է. «Մենք շահագրգռված ենք, որ ողջ հայության մեջ լինի միասնություն: Դրա համար էլ ստեղծել ենք Սփյուռքի նախարարություն, որի նպատակն է համախմբել համայն հայությանը եւ օժանդակել նրանց բոլոր այն խնդիրների լուծման գործում, որտեղ պետությունը կարող է օգտակար լինել»:

ՌԱԿ ատենապետը, շնորհակալություն հայտնելով հյուրընկալության համար, ներողություն է խնդրել Տիգրան Սարգսյանից՝ իր կուսակիցներից մեկի կողմից վարչապետի հասցեին հնչեցրած անհիմն մեղադրանքների համար: «Առաջին հերթին ցանկանում եմ իմ ներողամտությունը հայտնել՝ Ձեր նկատմամբ ներկայացված անարդար մեղադրանքների համար: Ես շատ խիստ կերպով խոսել եմ: Դժբախտաբար կան մարդիկ, որոնք քաջալերում են նման քայլերը, ամեն մարդ էլ ցանկանում է վարչապետ դառնալ»,- ասել է Մայք Խարապյանը:

Այս կապակցությամբ վարչապետը նշել է. «Մենք ամեն ինչ հասկանում ենք: Ցանկացած իշխանություն շատ լավ գիտակցում է, որ քաղցր կյանք իրեն չի սպասվում, տարբեր տեսակի զրպարտություններ, մեղադրանքներ միշտ էլ լինում են եւ ես հանգիստ եմ վերաբերվում նման բաներին»:

Այնուհետեւ ՌԱԿ ատենապետը վարչապետին է ներկայացրել է կուսակցության առաջիկա ծրագրերը եւ նշել, որ իրենք պատրաստ են համագործակցել հայրենի իշխանությունների հետ՝ Սփյուռքում հայանպաստ գործունեությանը նոր թափ հաղորդելու նպատակով:

Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ մեր երկիր հնարավոր ներդնողների ներգրավմանը, լիբանանահայության եւ սիրիահայության խնդիրներին վերաբերող հարցերի:

# «2012-ին անշարժ գույքի շուկայում կլինեն որոշակի դրական փոփոխություններ»

## *Կադաստրի կոմիտեի նախագահն անդրադարձավ կոմիտեի գործունեության արդյունքներին*



Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ **Երվանդ Զախարյանը** երեկ հրավիրած մամուլիասուլիսի ժամանակ ներկայացրեց 2011-ի գործունեության արդյունքները եւ այս տարվա ընթացքում կատարված փոփոխությունները: Ըստ կոմիտեի նախագահի, 2011-ի բոլոր ծրագրերը կատարվել են: Դրանցից հիմնականը համակարգի բարեփոխումների ծրագիրն է եղել, որը սկսել է իրագործվել այս տարի: Մասնավորապես, այս տարվանից կադաստրի 50 ստորաբաժանումների փոխարեն ստեղծվել են 10 մարզային կենտրոններ եւ 1 կենտրոն Երեւանում, որտեղ իրականացվում են գույքի գրանցում եւ տեղեկատվության տրամադրում: Մնացած ստորաբաժանումները վերածվել են գրասենյակների, որտեղ ընդունվում են դիմումները եւ տրամադրվում վկայականները:

Երվանդ Զախարյանը նշեց, որ քաղաքացիները կարող են դիմում ներկայացնել ցանկացած գրասենյակից մեկ այլ տարածքում գույքը գրանցելու կամ տեղեկատվություն տրամադրելու համար: Չափագրման աշխատանքները մասնավորացվել են, կրճատվել են դրանց ծավալները, քանի որ չափագրումը պարտադիր է միայն առաջին պետական գրանցման ժամանակ:

2011-ին ավարտվել է գրանցման եւ տեղեկատվության տրամադրման ավտոմատ համակարգի ներդրումը: Թվայնացվել են 2,5 մլն գործեր եւ ստեղծվել էլեկտրոնային արխիվ, իսկ փետրվարի 20-ից կգործի գույքի գրանցման էլեկտրոնային տարբերակը: Վերացել է օտարման, վարձակալության գործարքների ժամանակ նոտարական վավերացման պահանջը: Սեփականության գրանցման ժամանակ ինքնակամ կառույցների առկայությամբ գույքը կարող է գրանցվել: Նոր համակարգի ներդրման ժամանակ, ըստ կոմիտեի նախագահի, սկզբնական շրջանում կարող են լինել անհարմարություններ, բայց դրանք կհարթվեն:

Անդրադառնալով անշարժ գույքի շուկայի ցուցանիշներին՝ Երվանդ Զախարյանը պատասխանեց, որ 2011-ին նախորդ տարվա համեմատ 5,5 տոկոսով նվազել են բնակարանների գները, ինչպես նաեւ հողամասերի վարձակալության գործարքները: Մնացած բոլոր ցուցանիշները աճել են: Անհատական տների գներն աճել են 2,4 տոկոսով, հողերինը՝ 0,2 տոկոսով, գրավադրման գործարքներինը՝ 18 տոկոսով, իսկ միայն հիփոթեքային գրավադրման գործարքներինը՝ 24,7 տոկոսով: Կոմիտեի նախագահի կանխատեսմամբ՝ 2012-ին գների որոշակի դրական փոփոխություններ կլինեն:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Անշարժ գույքի գները դեկտեմբերին նվազել են

## *Սակայն գործարքների քանակը աճել է*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2011-ի դեկտեմբերին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 22393 գործարք, ինչը 31,7 տոկոսով բարձր է նախորդ ամսվա՝ նոյեմբերի համեմատ եւ 26,5 տոկոսով՝ 2010-ի դեկտեմբերի գործարքների քանակի համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը դեկտեմբերին նոյեմբերի համեմատ աճել է 13,7 տոկոսով, իսկ անցյալ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 7,9 տոկոսով: 4712 օտարման գործարքներից առքուվաճառքներինը կազմել է 77,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35,1 տոկոսն արձանագրվել է Երեւանում:

Մայրաքաղաքում առքուվաճառքի գործարքների 60,8 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2011-ի նոյեմբերի համեմատ, դեկտեմբերին բնակարանների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 1,3 տոկոսով, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 10,5 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա դեկտեմբերին նոյեմբերի համեմատ նվազել են 0,6 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | դեկտեմբեր 2010թ. | դեկտեմբեր 2011թ. | նոյեմբեր 2011թ. |
| Կենտրոն | 440600 | 426395 | 452000 |
| Արաբկիր | 355800 | 339761 | 335300 |
| Քանաքեռ-Զեյթուն | 275800 | 264833 | 260800 |
| Նոր-Նորք | 225800 | 229554 | 232200 |
| Ավան | 232400 | 239224 | 242200 |
| Էրեբունի | 239100 | 233915 | 232900 |
| Շենգավիթ | 237600 | 231482 | 232500 |
| Դավթաշեն | 263200 | 256476 | 257000 |
| Աջափնյակ | 224400 | 227193 | 232800 |
| Մալաթիա-Սեբաստիա | 223600 | 224419 | 220700 |
| Նուբարաշեն | 149100 | 147187 | 140100 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 260700 | 256400 | 258000 |

Մարզերում, բացառությամբ Երեւանի, դեկտեմբերին վաճառվել են 403 բնակարաններ, որոնց քանակը նոյեմբերի համեմատ աճել է 14,8 տոկոսով, իսկ 2010-ի դեկտեմբերի համեմատ՝ 11,9 տոկոսով: Բնակարանների միջին գները մարզերում դեկտեմբերին նոյեմբերի համեմատ աճել են 1,5 տոկոսով:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները դեկտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 301 հազար դրամ: Աբովյանում 1 քմ-ի գինը 145 հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 143 հազար դրամ: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորը՝ 127 հազար դրամ, Գորիսը՝ 116 հազար դրամ, Արմավիրը՝ 114 հազար դրամ, Իջեւանը 113 հազար դրամ, Եղվարդը՝ 109 հազար դրամ, Աշտարակը՝ 108 հազար դրամ, Մասիսը 107 հազար դրամ 1 քմ-ի դիմաց ցուցանիշներով:

2011-ի դեկտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առքուվաճառքի 497 գործարք, որից 126-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առքուվաճառքի գործարքների քանակը 2011-ի դեկտեմբերին նոյեմբերի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ մարզերում նվազել՝ 2,6 տոկոսով: 2010-ի դեկտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 0,8 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7,2 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2011-ի դեկտեմբերին նոյեմբերի համեմատ նվազել են 2,3 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | դեկտեմբեր 2010թ. | դեկտեմբեր 2011թ. | նոյեմբեր 2011թ. |
| Կենտրոն | 472000 | 460000 | 470000 |
| Արաբկիր | 384000 | 370300 | 372200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 290000 | 275200 | 279800 |
| Նորք-Մարաշ | 276000 | 302200 | 308300 |
| Ավան | 247000 | 249700 | 253200 |
| Էրեբունի | 249500 | 220000 | 237100 |
| Շենգավիթ | 252000 | 239700 | 242500 |
| Դավթաշեն | 277000 | 258300 | 269200 |
| Աջափնյակ | 242400 | 237100 | 242000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 239000 | 220700 | 230000 |
| Նուբարաշեն | 150900 | 144800 | 144800 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 280000 | 270700 | 277200 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները դեկտեմբերին նոյեմբերի համեմատ նվազել են 0,6 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 307 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատն է 1 քմ-ն 161 հազար դրամ, երրորդը՝ Աբովյանը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 132 հազար դրամ, Աշտարակը՝ 130 հազար դրամ, Իջեւանը 129 հազար դրամ, Գորիսը 127 հազար դրամ, Գյումրին եւ Եղեգնաձորը՝ 118 հազար դրամ 1 քմ-ի դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2011-ի դեկտեմբերին 2010-ի դեկտեմբերի համեմատ, հողերի առքուվաճառքի գործարքների քանակն աճել է 9,5 տոկոսով, աճուրդով վաճառքներինը աճել՝ 27,1 տոկոսով: Ընդ որում, Երեւանում վերջին ցուցանիշը աճել է 4,2 անգամ:

2011-ի դեկտեմբերին 2011-ի նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 28,6 տոկոսով, իսկ 2010-ի դեկտեմբերի համեմատ՝ 0,7 տոկոսով:

Իրականացվել են հիփոթեքային գրավադրման 243 գործարքներ, որից 133-ը՝ Երեւանում: Հիփոթեքային գրավադրման գործարքներից 82,7 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 11,9 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2011-ի նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 0,8 տոկոսով, ընդ որում, Երեւանում նվազել է 30,4 տոկոսով, իսկ մարզերում աճել 2,2 անգամ: 2010-ի դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 20,3 տոկոսով, ընդ որում, Երեւանում նվազել՝ 10,1 տոկոսով, իսկ մարզերում աճել 2 անգամ:

Այսպիսով, Հայաստանի անշարժ գույքի գները դեկտեմբերին հիմնականում որոշակիորեն նվազել են, բայց գործարքների քանակը աճել է: Ինչպես երեւում է շուկայի վերլուծության ցուցանիշներից, զգալի աճ են ունեցել աճուրդով հողերի վաճառքի եւ մարզերում հիփոթեքով կատարված գործարքները: Մինչդեռ Երեւանի բնակարանային շուկան պասիվացել է և՛ նոյեմբերի, և՛ անցյալ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Կադրերի ծո՞վ, թե՞ կադրերի սով

**Հայաստանցիներիս կողմից շրջանառվող որոշ զրույցների համաձայն՝ մեր երկրում Աստծո յուրաքանչյուր առավոտ 3 մլն Նապոլեոն է արթնանում: Այս կարծիքն արտահայտողների մեջ միամիտնե՞րն են շատ, թե՞ իրատեսները, դժվար է ասել: ՀՀ քաղաքացին, որ հիմնականում իրատես է, քանզի տառապանքը փորձ ունի, հարազատ-բարեկամներից քանի-քանիսն արտերկրներում արդեն տուն-տեղավորվել են, մտորում է, թե կադրային այս ծովի պայմաններում հարազատ իշխանությունն ինչու գնալով աղքատացնող իր քաղաքացուն էլ չի կարողանում մասամբ բարեկեցիկ առօրյա ապահովող աշխատանքի տեր դարձնել, որ նա էլ օտարության ճամփան չբռնի, գնալ պատրաստվողին էլ հուսադրելու խոսքեր ասի, մեկնածին էլ վերադարձի հույս ներշնչի: Նման մեկը որտե՞ղ տեսնի իրատեսի իր պատկերացումները, երբ բակ դուրս գալով հանդիպում է հիմնականում անտրամադիր մարդկանց, ովքեր, մաքուր գրական հայերենով լինի, թե փողոցային ժարգոնով, դժգոհության խոսքեր են հնչեցնում իրենց ապագան տնօրինողների մասին: Այսօրինակ տրամադրության պատճառներից մեկն ասենք՝ հանրապետությունում արձանագրված հերթական բարձր գնաճն է, որտեղ, ըստ պաշտոնական տեղեկատվության, որոշիչ նշանակություն ունեցավ շաքարավազի գնի կտրուկ բարձրացումը: Պաշտոնյաներն այն բացատրում են շուկայական հարաբերության առանձնահատկությամբ, նկատելու ցանկություն չդրսեւորելով, որ, ասենք, շուրջ 700 հազար կենսաթոշակառուներին ու հաշմանդամներին բավարար հատկացումներ տալու պարագայում նրանցից ոչ մեկը չէր հիշի շաքարավազի ներկայիս գինը, որը նրանք ընդամենը մի 100 դրամով բարձր են համարում, քանզի այդ չնչին գումարի կարիքն ունեն: Եվ ոչ ոք չի համարձակվում հիշել, թե ինչու խափանվեց գործարարի այն խոստումը, որ շաքարավազը առաջիկայում էլ վաճառվելու էր 2010 թվականի 320-330 դրամով: Ըստ որոշ կարծիքի՝ խափանվեց, քանզի չարդարացան գերհզոր արտադրություն նախաձեռնած գործարարի սպասումները՝ կապված գյուղաբնակ որոշ հատվածի կողմից գործարանին հումք մատակարարելու հետ: Նպատակն ընդունելի էր, հետեւանքը՝ անկանխատեսելի: Հետեւանքը՝ հարցերի մի ողջ շարան, որին գրեթե ոչ մի պատասխան չի տրվում, կարծես անթիվ-անհամար պետական պաշտոնյաների բանակում, նրանց մասնագիտական ջոկատներում գեթ մեկ պաշտոնակատար չկա, որ կոչված է ուղղորդելու այս գործընթացը, սկսած գերհզոր գործարանի կառուցման նպատակահարմարությունից մինչեւ հողագործների մտահոգությունների փարատումը: Իսկ մինչ այս վիճակը ՀՀ տնտեսության պատասխանատու բարձրագույն այրերն ինչպիսի ոգեւորությամբ էին նշում տարեկան 230 հազար տոննա շաքարավազի արտադրության եւ դրա զգալի մասն արտահանելու հնարավորության մասին, երբ տարածաշրջանում այս արտադրանքի մշտական ավելցուկ կա, իսկ հեռավոր երկրներում այն ստանում են առավել արդյունավետ շաքարեղեգից եւ մատչելի գնով իրացնում: Մեր հանրությունը չի հիշում նաեւ հայ ճակնդեղագործների շրջանում համապատասխան աշխատանք տարած այն պատասխանատուներին, սկսած գյուղնախարարի տեղակալներից ու վարչությունների պետերից, տեսչությունների ու բաժինների վարիչներից, ավագ ու կրտսեր մասնագետներից գեթ մեկին, որ խնդրի առումով հանրամատչելի ելույթ ունեցավ եւ փորձեց իր փաստարկված եզրահանգումներով նպաստել գործընթացի բարեհաջող ավարտին: Ավաղ. այսպես ենք արտահայտվում, որովհետեւ ՀՀ գյուղնախարարի նորանշանակ տեղակալներից եւ ոչ մեկը նախարարության աշխատակազմից չէր, ուր նորանշանակներին դասավանդած բազմաթիվ գիտությունների թեկնածուներ ու դոկտորներ կան: Ասվածը բնավ չի ենթադրում վերջիններիս պաշտպանության տակ առնել, քանզի համոզված ենք, որ ճաշակում են իրենց իսկ աճեցրած պտուղները: Գյուղատնտեսության ոլորտի կադրային ծովի մասին հիշատակումների պայմաններում երբ հարկ է լինում խոսել ընդամենը ՀՀ-ում շաքարի ճակնդեղի մշակման նպատակահարմարությունից, առավել քան վկայում է մեզանում կադրային սովի մասին: Եթե անգամ սա է մեզանում խնդիր, ինչպե՞ս ենք լուծելու ողջ հանրության կենսագոյության հիմնապայման համարվող կենդանական ծագման սննդատեսակների ապահովման առավել բարդ հարցը, որը կապված է կչկչացող ու բառաչող անասնատեսակների հետ: Կադրերը, ովքեր հարկ է որ մասնագետներ լինեն, ինչպե՞ս են հասկանալու անասունների լեզուն, երբ անզոր են նշված մշակաբույսը տասնամյակներ շարունակ պարբերաբար աճեցրած մարդկանց հանդեպ:**

**Տողերիս հեղինակը, որ հրապարակավ հայտարարում է իր ոչ նապոլեոնական որակների մասին, ՀՀ շարքային քաղաքացու սահմանադրական իր իրավունքով մշտապես է մտորում մեր կենցաղը տնօրինելու կոչված այրերի այսօրինակ գործողությունների մասին: 2016 թվականը հեռու չէ, երբ, ըստ պայմանավորվածությունների, փակվելու է Մեծամորի ատոմակայանը, քանզի այդ տարում նախատեսվում էր արդեն նոր ԱԷԿ ունենալ: 2002-ին, երբ սկսեցին խոսել այս մասին, թվում էր՝ 2016-ը շատ հեռու տարեթիվ է, կարելի էր ամեն խոստում տալ: Դարձյալ գերհզոր, 1000 մգվ ատոմակայան, որի հազիվ 20 տոկոսի ֆինանսավորումը խոստացավ գերտերություն Ռուսաստանի Դաշնությունը: Հյուսիսային հարեւանի ու դաշնակցի կադրերը հաշվարկել են իրենց հնարավորություններն ու գտել, որ ավելին ներդնել նպատակահարմար չէ, թեեւ հնարավորություններ անշուշտ ունեն: Փոխարենը մեր կադրերից չգիտես ով, չգիտես երբ, չգիտես որտեղ ու ինչ պայմաններում որոշեց, որ ՀՀ նոր ԱԷԿ-ը պետք է առնվազն 1000 մգվ-անոց լինի, տարածաշրջանում ամենահզորն ու գերժամանակակիցը: Ոչինչ՝ որ դրա համար մի քանի միլիարդ դոլար է հարկավոր, որ աշխարհում այլ գործընթացներ են ծավալվում, ֆինանսական ու տեխնածին ճգնաժամեր են արձանագրվում. թող ներդնողները հաշվարկեն դրանք, թող նրանց գլուխները ցավեն: Արդեն իսկ պարզ է, որ 2016-ին նոր ԱԷԿ ՀՀ-ում չի լինի, ինչպես չիրականացավ խոստացված նավթավերամշակման գործարանի կառուցումը կամ «Մարս» արտադրական հսկայի վերակենդանացումը: ՀՀ կադրային բազայի տնտեսվարական հատվածը պարզապես անկարող գտնվեց վերաշահագործել պարզից էլ պարզ էլեկտրական լամպերի արտադրությունը: Ինչո՞ւ, պարոնայք. հանրության որոշակի մասը չի ուզում հավատալ, թե գործընթացը ձախողվեց էլեկտրալամպեր ներմուծողների պահանջով, քանզի այս բիզնեսը լուրջ ասպարեզ չէ, քան է՝ երկրում աշխատատեղերի ստեղծումն ու սեփական արտադրությունների ծավալումը: Հազիվ միջին բիզնես համարվող այս արտադրանքի արտադրությունը չհաջողելը չի՞ խոսում արդյոք մեզանում կադրային սովի մասին. գործարանը կա, կադրերի պակաս չկա, հումքը մեծ ծավալներ չունի, արտադրանքի պահանջարկ՝ ինչքան ուզես, իսկ իլյիչյան լամպեր այդպես էլ չկան ու չեն էլ սպասվում:**

**Հայ հանրությանը մտահոգող հարցերը շատ են, իսկ պատասխաններ չկան ու չկան: Դրանք մասամբ իսկ հանգուցալուծելու կոչված այրերը տաքուկ ու փափուկ աշխատասենյակներից, ժամանակակից ավտոմեքենաների ու ինքնաթիռների լուսամուտներից են նայում իրենց շուրջն ընթացող գործողություններին, երբ դրանք ընդամենը բանիմաց ու նպատակային կառավարում են պահանջում:**

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Էրդողանը «հանգիստ թողեց» Իլհամ Ալիեւին. մինչեւ ե՞րբ

Թուրք-ադրբեջանական տարաձայնությունները, ամենայն հավանականությամբ, բավականին առարկայական են: Այնքան, որ Բաքվի լրատվամիջոցներից մեկն իրեն թույլ էր տվել «դասեր տալ» Մեհմեդ Ալի Բիրանդին եւ «հասկացնել, որ եթե Ադրբեջանի ԱԳՆ-ն մի բան ասում է, ուրեմն դա երկրի բարձրագույն ղեկավարության տեսակետն է»:

Հազիվ թե այդ տարրական ճշմարտությանը Թուրքիայում անգետ են: Խնդիրը մակարդակների տարբերությունն է: Ֆրանսիային ԵԱՀԿ ՄԽ համանախագահությունից «հեռացնելու մասին», օրինակ, Թուրքիայում արտահայտվել է ոչ այլ ոք, քան արտգործնախարար Դավութօղլուն: Մինչդեռ նրա ադրբեջանցի պաշտոնակիցը «ձկան լռություն է պահպանում»: Թուրքական մամուլին հենց դա է անհանգստացնում:

Հարցն, ըստ երեւույթին, Թուրքիայի կառավարող կուսակցության համար ներքաղաքական հնչեղություն ունի: Էրդողանն ստիպված է նաեւ ներքին մարտահրավերներ դիմագրավել: Այդ իմաստով, սակայն, նա ընտրել է ամենապարզունակ «լուծումը» եւ հայտարարել, որ «թուրք-ադրբեջանական տարաձայնությունների խնդիր գոյություն չունի»:

Առհասարակ, թերեւս, այսօր ավելի հրատապ է, թե ի՞նչ զարգացում կունենան ռուս-թուրքական, թուրք-իրանական, քան թուրք-ադրբեջանական հարաբերությունները: Քանի որ երկրորդի ռազմավարական նշանակությունը պայմանավորված է ոչ այնքան կողմերի ցանկությամբ, որքան աշխարհաքաղաքական հնարավոր կոնյունկտուրայով:

Այդուհանդերձ, «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի արժեզրկումը հավասարապես ձեռնտու չէ Բաքվին եւ Անկարային: Առաջին դեպքում՝ զուտ ներքաղաքական նշանակությամբ: Քանի որ «թուրքական համերաշխության ապահովումը» Իլհամ Ալիեւի իշխանության հենարաններից մեկն է: Առնվազն՝ քարոզչական: Իսկ Անկարան կարող է հեղինակազրկվել վերջնականապես, եթե միջազգային հանրությունը համոզվի, որ «չափավոր իսլամականությունն» անընդունակ է եղանակ ստեղծել ոչ միայն Մերձավոր Արեւելքում, այլեւ անգամ Ադրբեջանում:

Դա է թերեւս պատճառը, որ Էրդողանը որոշել է «հանգիստ թողնել» Իլհամ Ալիեւին: Քայլ, որ հավանաբար վերլուծաբաններին դրդի մտածել, թե Բաքուն եւ Անկարան «չբարձրաձայնվող պայմանավորվածություններ ունեն»: Ներկա պահին դա խիստ ձեռնտու է Թուրքիային. եթե գլոբալ «դերակատար դառնալ» չհաջողվեց, ապա ինչո՞ւ տպավորություն չստեղծել, թե Թուրքիա-Ադրբեջան տանդեմն ընդունակ է «կշեռքի նժարներից մեկի օգտին ընտրություն կատարել»:

«Զերկալո»-ի մեկնաբանը, մասնավորապես, գնահատելով ադրբեջանական իշխանությունների պահվածքը, եզրակացնում է, թե «անհնար է անվերջ կիսահեղի ներկայանալ», եւ կանխատեսում է, որ «Ադրբեջանի համար վճռական կողմնորոշում ընդունելու պահն է»: Նա, ընդսմին, գրեթե հավասարաչափ է բաշխում Թուրքիայի «ճնշումը» Ֆրանսիայի եւ Ադրբեջանի վրա եւ մտասեւեռվում ԵԱՀԿ ՄԽ-ից Ֆրանսիային «հեռացնելու» թուրքական «նախաձեռնողականության» ենթատեքստի վրա:

Գրեթե առանց բացառության, ադրբեջանական փորձագետները կարծիք են հայտնում, որ «իմաստ չունի ԵԱՀԿ-ում նման հարց բարձրացնել», իսկ ահա «Զերկալո»-ի վերլուծաբանը գտնում է, որ «իրավական մեխանիզմների բացակայության մասին ասվածն անհամոզիչ է, բավական է, որ Ադրբեջանը պաշտոնապես ասի, թե չի ընդունում Ֆրանսիայի միջնորդական ծառայությունը»:

Անկարայի նպատակադրվածությունը հասկանալի է՝ հնարավորինս վնասել Ֆրանսիայի միջազգային վարկանիշին: Բայց, որքան էլ Ադրբեջանի դաշնակից, Թուրքիայի համար Լեռնային Ղարաբաղի խնդիրը կենսական չէ: Այն պարզ պատճառով, որ դա ընդամենը դաշնակից երկրի, բայց ոչ իր սեփական հարցն է: Եվ Բաքվում դա հասկանում են:

Անկարան, իհարկե, ԼՂ հարցը լուծելու ցանկություն ունի: Հնարավորությունները, սակայն, սահմանափակ են: Նույն կերպ՝ Ֆրանսիային «իր տեղը դնելու» մտադրություն Բաքուն էլ ունի: Դրանում չպետք է կասկածել: Բայց այստեղ էլ Ադրբեջանի հնարավորություններն են սահմանափակ:

Եվ սա է, որ պաշտոնական Բաքվին թույլ չի տալիս ամենաբարձր մակարդակով միանալ Անկարայի հակաֆրանսիական արշավին: Էրդողանն, այսպիսով, հասկացրեց, որ «դրություն է մտնում» եւ Իլհամ Ալիեւից չի պահանջում «վճարել ըստ պարտամուրհակի»: Բայց դա, միաժամանակ, Ադրբեջանին տրված նոր «պարտամուրհակ» է, որպեսզի իր հերթին Իլհամ Ալիեւն էլ Թուրքիայից չպահանջի անհնարինը:

Սա շատ հետաքրքրական իրավիճակ է, երբ «ավագ» եւ «կրտսեր» եղբայրը համաձայնության են գալիս յուրաքանչյուրն իր «վերմակի չափով ոտք մեկնելու» հարցում եւ «պայմանավորվում, որ յուրաքանչյուրի խնդիրն իրենն է»: Գոնե՝ այս պահին: Իսկ թե որքա՞ն երկար կտեւի դա, ինչքա՞ն ժամանակ է Էրդողանն Իլհամ Ալիեւին «հանգիստ թողնում», պարզ կլինի, գուցե, Ռուսաստանում, Ֆրանսիայում եւ ԱՄՆ-ում նախագահական ընտրություններից հետո, եթե մինչ այդ Իրանի կամ Սիրիայի հարցում ֆորսմաժոր չստեղծվի:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Պորտ Սաիդի բախումները հավանաբար հրահրել էին իսլամիստները

## *Ցույցեր Կահիրեում եւ Սուեզում*

Երեկ «**Ազգը**» հաղորդեց Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքի մարզադաշտում ֆուտբոլային մրցախաղի ժամանակ տեղի ունեցած բախումների մասին (74 սպանված, 1000-ից ավելի վիրավոր): Երկրում եռօրյա սուգ է հայտարարված: Երեկ իշխանությունների դեմ ուղղված բողոքի ցույցեր են անցկացվել Սուեզում եւ Կահիրեում: Սուեզում ոստիկանների եւ ցուցարարների բախման ժամանակ սպանվել են 2 եւ վիրավորվել 15 անձինք: Երեկ գիշեր Կահիրեում ոստիկանության եւ ցուցարարների բախումների հետեւանքով 600-ից ավելի մարդ է տուժել:

Սուեզում ցույցերի պատճառը Պորտ Սաիդի մարզադաշտում սուեզցիներից մեկի սպանությունն էր: Մայրաքաղաք Կահիրեում բողոքի ցույցերը վերաճել են հակակառավարական ելույթների: Ցուցարարները փորձել են ներխուժել Ներքգործնախարարության շենք: Ոստիկանությունն արտասվաբեր գազ է գործադրել: Ի պատասխան՝ ցուցարարները քարկոծել են ոստիկաններին: BBC-ն հաղորդում է, որ շատերը պահանջում են նախագահ Մուբարաքի տապալումից ի վեր երկրում իշխող զինվորական վարչակարգի հրաժարականը: Թահրիր հրապարակում կրկին հայտնվել են ցուցարարների վրաններ, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը:



Պորտ Սաիդում չորեքշաբթի օրը մրցում էին տեղի «Ալ Մասրի» եւ Կահիրեի «Ալ Ախլի» թիմերը, որոնց դիմակայությունը սկզբունքային բնույթ է կրում, իսկ վերջերս նաեւ քաղաքական երանգ է ստացել: Եգիպտական լրատվամիջոցները նշում են, որ Պորտ Սաիդում ֆուտբոլասերների մեջ շատ են նախկին վարչակարգի կողմնակիցները, իսկ «Ալ Ախլիի» երկրպագուները եղել են անցյալ տարվա հեղափոխության ակտիվ մասնակիցներ: Վերջերս Եգիպտոսում անցկացված խորհրդարանական ընտրություններում հաղթեցին իսլամիստները, որոնք հատկապես լավ կազմակերպված են Կահիրեում: Իսկ բախումները սկսվել էին Պորտ Սաիդի մարզադաշտում մայրաքաղաքի թիմի երկրպագուների պարզած վիրավորական պաստառի պատճառով, որի վրա գրված էր «Պորտ Սաիդում չկա իսկական տղամարդ»: Ուստի մեկնաբանների մեծ մասը կարծում է, որ բախումները իսլամիստների սադրանքի հետեւանքն են:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

# Օրենքով ճանաչված ցեղասպանությունների գոյության վիճարկումը պատժող օրենքի նախագիծ

## *(վերջնական տեքստը, որն ընդունվեց Ֆրանսիայի սենատի կողմից)*

Սենատն առանց փոփոխության, առաջին ընթերցմամբ ընդունեց Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագիծը, որը տրվում է ստորեւ:

**Հոդված 1**

Մամուլի ազատությանը վերաբերող 1881 թ. հուլիսի 29-ի օրենքի 4-րդ գլխի 1-ին պարագրաֆը լրացվել է 24 բ հոդվածով՝ հետեւյալ ձեւակերպմամբ.

«Հոդ. 24 բ: 24 ա հոդվածում նախատեսված պատիժները կիրառելի են նրանց նկատմամբ, ովքեր 23-րդ հոդվածում նշված միջոցներից որեւէ մեկով վիճարկել կամ վիրավորական ձեւով նսեմացրել են Քրեական օրենսգրքի 211-1 հոդվածում սահմանված եւ ֆրանսիական օրենքով այդպիսիք ճանաչված ցեղասպանական ոճիրներից մեկի կամ մի քանիսի գոյությունը:

Տրիբունալը նաեւ կարող է կարգադրել կայացված դատավճռի հրապարակումը կամ տարածումը Քրեական օրենսգրքի 131-35 հոդվածում նախատեսված պայմաններով:

**Հոդված 2**

Նույն օրենքի 48-2 հոդվածը փոփոխվել է հետեւյալ կերպ.

1. «տեղահանվածների» բառից հետո ավելացնել «կամ ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների, հակամարդկային ոճիրների, թշնամու հետ հանցակցության կամ գործակցության մյուս բոլոր զոհերի» բառերը

2. Վերջում «հոդված 24 ա-ում նախատեսված խախտումը» բառերը փոխարինել են «հոդվածներ 24 ա-ում եւ 24 բ-ում նախատեսված խախտումները» բառերով:

**Քննարկվել է Փարիզում, 2012 թ. հունվարի 23-ի հրապարակային նիստում**
**Նախագահ՝**
**Ժան-Պիեռ Բել (ստորագրություն)**

# Ֆրանսիան մեծ տերություն է

## *Պատշաճ չէ, որ նա հրաժարվի Սենատի որոշումից, առավել եւս՝ ընկրկի Թուրքիայի առջեւ*

*1-ին էջից*

Բողոքն ընդունելու դեպքում Սահմանադրական դատարանը հակադրվելու է Ֆրանսիայի Ազգային ժողովին, Սենատին եւ կառավարությանը: Քանի որ երկրում գործում է Հոլոքոսթի ժխտումը պատժող օրենք, ուստի նա երկակի ստանդարտ է կիրառելու Հոլոքոսթի ու Հայոց ցեղասպանության նկատմամբ, թերեւս դրանով էլ, որպես խտրականության դրսեւորում, ոտնահարելու է մարդու իրավունքները, հարվածի տակ դնելով ֆրանսիական կառավարության վարկն ու Ֆրանսիայի միջազգային հեղինակությունը:

Ի՞նչ որոշում կընդունի Սահմանադրական խորհուրդը օրինագծի առնչությամբ, ցույց կտա ժամանակը: Բայց որ օրինագիծը մերժելու դեպքում մերժումն աշխարհում կվերագրվի ոչ թե Սահմանադրական դատարանին, այլ՝ անմիջականորեն Ֆրանսիայի Հանրապետությանը, միջազգային հանրությունը մերժումը կընկալի Ֆրանսիայի ընկրկումը Թուրքիայի առջեւ, Ֆրանսիան կհեղինակազրկվի եւ դա հատկապես նկատելի կլինի Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում, ակնհայտ է:

Այլ կերպ, Ֆրանսիան մեծ տերություն է: Հետեւաբար նրան պատշաճ չի լինելու Ազգային ժողովում, ապա Սենատում ընդունված օրինագծից հրաժարվելը, առավել եւս տեղի տալը Թուրքիայի ճնշումներին: Թերեւս դա է ստիպել Նիկոլա Սարկոզիին նախարարների խորհրդի նիստում հայտարարել, որ Սահմանադրական դատարանում եթե օրինագիծը մերժվի, ապա ինքը ձեռնամուխ կլինի նոր օրինագծի մշակման: Միաժամանակ նա հիշեցրել է Հոլոքոսթի ժխտման համար երկրում պատիժ սահմանող օրենքի գործունեության մասին:

Թեեւ ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունումով Ֆրանսիան ստանձնում է ժխտողականության դեմ պայքարի առաջամարտիկի դերը աշխարհում, սակայն ընդունման գլխավոր պատճառը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման նկատմամբ նրա, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող մյուս երկրների՝ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի, Եվրոմիության եւ առհասարակ միջազգային հանրության շահագրգռություններն են, եթե, իհարկե, ընդունենք, որ միջազգային հանրություն ասելով պետք է հասկանալ միջազգային ուժերին:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ սեփական պատմության հետ Թուրքիայի առերեսումը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ միջպետական առողջ հարաբերություններ հաստատելու նախապայմանն է: Դա հավանաբար ամբողջությամբ չի վերացնի, բայց գոնե կնպաստի, որ թուլանա հայ ժողովրդի անվստահությունը թուրք ժողովրդի նկատմամբ, որն առաջացել է ոչ միայն Հայոց ցեղասպանությանը թուրքական ժողովրդական զանգվածների անմիջական մասնակցությամբ, այլ՝ ցեղասպանության ժխտողական հարցում իշխանություններին թուրք հասարակության ցուցաբերած անվերապահ համերաշխության պատճառով:

Ակնհայտ է, որ ֆրանսիական օրինագիծը սպառում է Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության դիրքերը: Դիրքերի սպառման պայմաններում թուրքական պետությունը ակամա զրկվում է ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին պաշտոնական թեզ հակադրելու եւ ժխտողականության միջոցով գործընթացի ծավալումը կասեցնելու հնարավորությունից: Դրանով միաժամանակ սահմանափակվում է նաեւ Թուրքիայի սեփական պատմության հետ առերեսումից խուսափելու հնարավորությունը եւ նա ակամա կանգնում է պատմական իրողության հետ հաշտվելու եւ այդ իրողությունը պաշտոնապես ճանաչելու փաստի առջեւ:

# Շառլ Ադամյանի ծովանկարը՝ Էջմիածնի թանգարանին



Խմբագրություն **Շահեն Խաչատրյանի** ամեն այցելություն կերպարվեստի, մշակույթի աշխարհի մի թարմ նորություն, Հայաստանում կամ արտերկրում լույս ընծայված գեղանկարչական ալբոմի, գրքի կամ հայ որեւէ նկարչի գործի վերահայտնման կամ Հայաստանի թանգարաններին արված նվիրատվությանն է վերաբերում: Ինչպես իր նախորդ այցելության՝ այս անգամ էլ առիթը դա էր:

Շառլ (Կարապետ) Ադամյանը Ֆրանսիայում հաջողությունների հասած եւ անուն վաստակած նկարիչ է: Ստեղծագործական սկզբնական շրջանում աֆիշներ է հեղինակել Առաջին համաշխարհային պատերազմին վերաբերող եւ բազմաթիվ գրքեր ձեւավորել: 1923 թ. Շ. Ադամյանը բնակության է հաստատվել Սեն-Ժիլ դը Քրուա ֆրանսիական ծովափնյա փոքրիկ քաղաքում: Ծովը խորհրդավորության անսահմանությամբ մեկընդմիշտ գերեց նկարչի հոգին ու վրձինը: Նա փորձեց ճանաչել, հասկանալ ծովի լեզուն եւ այլեւս սկսեց զբաղվել միայն ծովանկարչությամբ, շուրջ 25 տարի: Ստեղծեց բազմաթիվ կտավներ, ծովային ամենատարբեր տեսարաններ, նրա կտավներին ծովը հայտնվեց օրվա տարբեր պահերի փոփոխություններով, նկարեց ծովափնյա տեսարաններ: Եվ հետաքրքրականը՝ նրա ծովը մշտապես գույնի միեւնույն՝ բաց կապտագորշավուն երանգների մեջ է ծավալվում: Շառլ Ադամյանը բազմաթիվ ցուցահանդեսների է մասնակցել, բարձր գնահատվել: Սեն-Ժիլ դը Քրուայի քաղաքապետարանը որոշել է նրա տունը դարձնել թանգարան:

Տասը տարի առաջ արվեստաբան Շահեն Խաչատրյանը Ֆրանսիայում ծանոթանում է գեղանկարչի կրտսեր դստեր՝ Մոդ Բիանքիի հետ, երբ նա գյուղատնտեսական մի հանդեսի գլխավոր խմբագիրն էր: Մոդը Շահենին է նվիրում հոր աշխատանքներից մեկը, որն արվեստաբանը հանձնում է Ազգային պատկերասրահին: Երբ անցած տարի Շ. Խաչատրյանը Ֆրանսիայում էր, կրկին հանդիպեց Մոդ Բիանքիին: «Մոդն ապրում է Ատլանտյան ափին գտնվող Սեն-Ժիլ դը Քրուա քաղաքում, որի կենտրոնական պողոտան կրում է Շառլ Ադամյանի անունը: Մեր հանդիպման ժամանակ ընտրեցի մի ծովանկար եւ խնդրեցի նրան նվիրել դա Էջմիածնի նախապատրաստվող թանգարանին,- պատմում է արվեստաբանը:

Պայմանավորվեցինք մարտ ամսին հանդիպել՝ նկարը վերցնելու: Մոդը վատառողջ է եւ հիվանդության սաստկացող օրերին պառկած է լինում: Մեկ շաբաթ առաջ ահա լուր ստացա, որ նկարը նա հանձնել է Հայաստանի դեսպանություն, որի միջոցով ուղարկվել է արտաքին գործերի նախարարություն, այնտեղից էլ մուտք գործել Էջմիածնի թանգարան: Դժվար չէ կռահել պատճառը, թե ինչու նա՝ արդեն առաջացած տարիքի, վատառողջ այդ կինը շտապել եւ օր առաջ նկարը փոխանցել է Հայաստան: Նկարը արդեն Խրիմյան Հայրիկի կառուցած եւ այժմ «Արշիլ Գորկի» անունը կրող թանգարանում է:

Հայաստանի եւ սփյուռքահայ արվեստագետների ընտանիքների նվիրատվությամբ Էջմիածնի թանգարան է մտել շուրջ 70 աշխատանք: Վերջին շրջանում՝ վրձնի այնպիսի հայ վարպետների, ինչպես Զաքար Զաքարյանի, Գառզուի, Ժանսեմի, Լեւոն Թյությունջյանի, Էդգար Շահինի, Հարություն Հարությունյանի, Ռուբեն Նաքյանի, Մինասի, Հակոբ Հակոբյանի, Զարեհ Մութաֆյանի, Լավինյա Բաժբեուկ-Մելիքյանի եւ ուրիշների գործեր:

Այս ճանապարհով , հավատացած եմ, Էջմիածնի «Արշիլ Գորկի» թանգարանը ընթացող շինարարական որոշ աշխատանքներից հետո, հատկապես երբ Երեւան կգան նաեւ Արշիլ Գորկու քրոջ կողմից կտակված նկարները, արվեստասերների համար կդառնա իրոք գրավիչ մշակութային օջախ: Հույս ունեմ, որ թանգարանը կկայանա, որպես XIX-XX դարերի, արդիական արվեստի հայտնի հայ նկարիչների լավագույն գործերի ցուցադրման վայր»:

Կերպարվեստի զարմանալի այս նվիրյալն ու էնտուզիաստը այսպես տասնամյակներ շարունակ ապրում է իր գործին անդավաճան: Իր բազմաթիվ շրջագայություններն ու հարաբերությունները ամեն անգամ ծնունդ են տալիս մի նոր ստեղծագործության հայտնվելուն՝ Հայաստանի թանգարաններին նոր նվիրատվությամբ: Հավաքչական այդ դժվարին աշխատանքի թվագրության պատկերն այսպիսին է՝ 75 գործ «Սարյան» թանգարանին, շուրջ 400 նկար՝ Ազգային պատկերասրահին, 70 գործ՝ Էջմիածնի թանգարանին: Այս թվերի տակ ապրում է որոնող, անհանգիստ հոգի՝ ձեւավորելով հայ մարդու անկրկնելի մի կենսագրություն:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Ինդոնեզական տարրեր հայկական ցուցասրահում

Փետրվարի 3-ին գեղանկարիչ **Տարոն Սիմոնյանը** արվեստասեր հասարակությանը ներկայացրեց «Սակրալ» կոչվող ինդոնեզական տարրերով համեմված ցուցադրությունը: Սանկտ Պետերբուրգում ծնված գեղանկարիչն իր ստեղծագործական ուղին սկսել է համաշխարհային մշակույթի ուսումնասիրությամբ:

«Ինդոնեզական հեռուներից բերված ստեղծագործական քերթվածքներով Տարոն Սիմոնյանը ներկայանում է Հայաստանին», ասաց Հովի. Շարամբեյյանի անվ. ժողովրդական ստեղծագործությունների կենտրոնի ցուցասրահի տնօրեն **Հովիկ Հովեյանը**:

Վերջինս ներկայացրեց, որ գեղանկարներում առկա է երեք գեղագիտական սեւեռումներ՝ աշխարհայացք, աշխարհընկալում, աշխարհայեցողություն, որոնք ուղեկցում են Սիմոնյանի ստեղծագործությունները:

Գեղանկարչի հետաքրքրությունների շրջանակը ներառում է համաշխարհային մշակույթի տարբեր ուղղություններ: Դրանք պայմանավորում են նկարների առանձնահատկությունները:

Մեզ հետ զրույցում գեղանկարիչ Սիմոնյանը բացահայտեց, որ Հայաստանը դեռեւս ամբողջովին չի ուսումնասիրել:

«Ինձ Հայաստանը շատ է հետաքրքրում եւ այն պատկերելու համար պետք է խորն ուսումնասիրել», ասաց գեղանկարիչը:

Ցուցահանդեսին ներկա Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն **Փարավոն Միրզոյանը** երիտասարդ գեղանկարչին սահուն ստեղծագործական ուղի մաղթեց:

«Ծնվելով եւ ապրելով Պետերբուրգում՝ նա պահպանել է ազգայինը: Ես կուզեի Տարոնին ցանկանալ մի այնպիսի մտածելակերպ, որը հետագայում էլ պահպանի իր տեսակը», ասաց Միրզոյանը:

Ցուցահանդեսն ուղեկցվում էր «Ռենեսանս» քառյակի նվագակցությամբ:

**ԵՊՀ ուսանողներ**

# Չինական համերգ Հայաստանում

Փետրվարի 13-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում չինական երաժշտության սիրահարները կարող են ներկա գտնվել չինական հատուկ համերգի: Համերգը կազմակերպվում է հայ-չինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի միջոցառումների շրջանակում:

Համերգային ծրագրով Երեւան է ժամանելու ՉԴՀ-ի Լանճոյի համալսարանի երաժշտական խումբը: Համերգի հրավիրյալների շարքում են ՉԴՀ-ի Լանճոյի համալսարանի ռեկտոր Ծինգ Թաոն, ԵՊԼՀ-ի ռեկտոր Սուրեն Զոլյանը, ՀՀ-ում ՉԺՀ-ի դեսպան Թիեն Ջանչունը, ՀՀ-ում Չինաստանի դեսպանատնից, Չինաստանից, տարբեր նախարարություններից ներկայացուցիչներ եւ այլ հյուրեր:

*Համերգի մուտքն ազատ է:*



# «Պարձ յարմաստ»

Այս խորագիրն էր կրում փետրվարի 2-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կայացած «Կարին» ավանդական երգի-պարի խմբի (ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Գագիկ Գինոսյան**) ստեղծման 10-ամյակին նվիրված հոբելյանական համերգ-դասախոսությունը: Այո, համերգ-դասախոսություն, քանզի յուրաքանչյուր համերգային կատարումից առաջ՝ դա լիներ երգ թե պար, ավանդական երգ ու պարի քաջ գիտակ Գագիկ Գինոսյանը ներկայացնում, բացատրություններ էր տալիս եւ մեկնաբանում: Պարզապես պետք էր ներկա լինել ու վայելել այն մի քանի ժամերը, որ պարգեւեցին այդ յուրօրինակ հոբելյանական համերգին ելույթ ունեցողները: Բացի «Կարին»-ից ելույթներ ունեցան Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի «Մշո հավքեր», Արագածոտնից «Սասունցիկ», Ջուղաքարից «Ալաշկերտ» ավանդական պարի ամենատարեցների խմբերը, որոնց էր միացել նաեւ հայտնի Քալաշյան քույրերից՝ 80-ամյա Հռիփսիմե տատիկը իր անբաժան տարազով: Իսկ երբ հնչեց «Սասնա յարխուշտա», «Գորանի», «Գյովնդ», «Թամզարա», «Իշխանապար» դահլիճի կեսը ոտքի ելավ ու ձեռք-ձեռքի, ուս-ուսի տված պարեց համերգի ողջ ընթացքում:



Ահա այդպես խրոխտ, միասնական, անաղարտ ավանդական երգն ու պարը նոր սերնդի հոգու մեջ մխրճվեց ու շատերն առաջին անգամ ձերբազատվելով կաշկանդումներից՝ միացավ պարողներին: Ներկաներին զարմացրել էր, թե այդքան մարդ, այդ ավանդական պարերի շարժումները որտեղից գիտի: Արդեն երկու տարի վեց ամիս է, ինչ Գագիկ Գինոսյանը ամեն ուրբաթ Կասկադի բացօթյա տարածքում եւ «Նարեկացի» մշակ. կենտրոնում անցկացնում է բաց դաս եւ բոլոր ցանկացողներին անվճար ուսուցանում է մեր ավանդական պարերը: Ահա այս ազգանվեր ու կարեւոր քայլով մեր երիտասարդներից շատերը սովորում են մերը՝ հայկականը: Այն ինչ կատարվում էր դահլիճում, հիացրել ու ոգեւորել էր նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, տիկնոջը՝ Ռիտա Սարգսյանին, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին, շատ ու շատ հյուրերի, որոնք աչք չէին թարթում եւ ուշադիր դիտում էին երիտասարդների ոգեւորությունը: Երեւի նրանք էլ կցանկանային միանալ պարողների հոծ բանակին, եթե չլինեին զբաղեցրած պաշտոնները: Ի դեպ, նախարարը լավ էլ տիրապետում է սասունցիների պարերին, որը դեռ մանկուց տեսել ու սովորել է հորից ու հարազատներից:

«Կարին» խումբը մինչ ստեղծվելը ունի իր սաղմնավորման պատմությունը: Մասնագիտությամբ կիբեռնետիկ եւ ռազմական գործի վարպետ Գագիկ Գինոսյանի ճակատագիրը կտրուկ փոխվում է, երբ հանդիպում է տոհմիկ երգի վարպետ Հայրիկ Մուրադյանին, ու այդ օրվանից նվիրվում ազգային մշակույթի արմատների ուսումնասիրման բարդ ու դժվարին գործին: Այնուհետեւ տարիների փորձը պարարվեստում Գինոսյանին տանում է դեպի Կարին եւ սկսում է փնտրտուքը կարինցիների մշակույթի շուրջ, որով էլ ուզել է ճանաչել ինքն իրեն, իր արմատներին:

Անցած 10 տարիներին «Կարին» խումբը գործելով ՀՀ ԿԳՆ մշակույթի կենտրոնի ներքո, իրականացրել է ոչ միայն մշակութային, այլեւ կրթադաստիարակչական մեծ ծավալի աշխատանք, եւ որ ամենակարեւորն է՝ իրականացրել բանահավաքչական բարդ ու կարեւոր ծրագրեր: Այդ գործում մեծ է եղել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի տրամադրած դրամաշնորհը, որով էլ հայ ավանդական երգեր՝ հավաքագրված Շիրակի, Արագածոտնի, Արարատի եւ Գեղարքունիքի մարզերից, հիմք են հանդիսացել վերականգնված պարերի: Շուրջ 50 անհետացող պարանմուշներ հնարավոր է եղել փրկել եւ ստեղծել ավանդական թատրոն՝ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Առաջիկայում թատերախումբը հանդիսատեսին կներկայացնի Պ. Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմից «Ողջանջ հարսանեկան» ներկայացումը:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Նախատեսվում է Գյումրիի «Երեխաների տուն» մանկատան վերանորոգումը

2011-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի իրականացրած հեռախոսամարաթոնի շրջանակներում գերմանահայ համայնքի նվիրաբերած միջոցներով կիրականացվի Գյումրիի «Երեխաների տուն» մանկատան հիմնանորոգումը: Մանկատանը խնամք են ստանում մտավոր եւ ֆիզիկական խնդիրներով մինչեւ վեց տարեկան ավելի քան 120 երեխա: 1924-ից գործող մանկատունն ունի եւս երկու մասնաշենք եւ հիմնադրամի նախաձեռնությամբ կիրականացվի երեք մասնաշենքերից երկուսի վերանորոգումը:

Ծրագրի շրջանակում կբարեկարգվեն ննջարանները, մարզադահլիճը, ճաշարանը, սանհանգույցները: Վերանորոգման արդյունքում նախատեսվում է տարածքն առավելագույնս համապատասխան դարձնել հաստատության պահանջներին:

# Մարզական

## Բերեզովսկին պաշտոնապես դարձավ Մոսկվայի «Դինամոյի» դարպասապահ

Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի դարպասապահ Ռոման Բերեզովսկին պաշտոնապես դարձավ Մոսկվայի «Դինամոյի» խաղացող: Մասնակցելով թիմի երկժամյա պարապմունքին, Բերեզովսկին այնուհետեւ ակումբի գրասենյակում իր ստորագրությունն է դրել պայմանագրում, ըստ որի փորձառու դարպասապահը մինչեւ 2013-ի հունիսի 30-ը կրելու է «Դինամոյի» մարզահագուստը:

«Իմ 6 տարվա բացակայության ընթացքում «Դինամոն» մեծ առաջընթաց է ապրել: Դա վերաբերում է ինչպես թիմի ելույթներին, այնպես էլ ակումբի ենթակառուցվածքներին: Երջանիկ եմ այս կոլեկտիվում կրկին հայտնվելու համար: Կաշխատեմ ուժերիս ներածի չափով նպաստել թիմի հաջող մրցելույթներին: «Դինամոյի» ֆուտբոլասերները մշտապես ջերմորեն են վերաբերվել ինձ: Այժմ նրանց սերը կրկին պետք է նվաճել», պայմանագրի ստորագրումից հետո նշել է 37-ամյա Ռոման Բերեզովսկին:



Երեկ Ռոման Բերեզովսկին «Դինամոյի» հետ մեկնեց իսպանական Կադիս քաղաք, որտեղ թիմը մինչեւ փետրվարի 15-ը ուսումնամարզական հավաք կանցկացնի: Փետրվարի 7-ին «Դինամոն» ստուգողական առաջին խաղում ուժերը կչափի Չեխիայի առաջնության առաջատար եւ գործող չեմպիոն Պրահայի «Սպարտայի» հետ:

Եվ այսպես, 6-ամյա ընդմիջումից հետո Ռոման Բերեզովսկին վերադարձավ Մոսկվայի «Դինամո», որի կազմում Ռուսաստանի պրեմիեր լիգայի առաջնություններում հանդես է եկել 2002-2005-ին: Ընդհանուր առմամբ նա «Դինամոյում» անցկացրած 88 խաղում 103 գոլ է բաց թողել: Գուցե քչերին է հայտնի, որ Ռոման Բերեզովսկին ֆուտբոլային կարիերան սկսել է Հայաստանում: 1991-ին նա «Կոշկագործի» կազմում մասնակցել է ԽՍՀՄ 2-րդ խմբի առաջնության հայաստանյան գոտու մրցումներին: 1992-ին, երբ անցկացվեց Հայաստանի ազգային անդրանիկ առաջնությունը, Բերեզովսկին նախ պաշտպանեց «Շենգավիթի», ապա Կապանի «Սյունիքի» դարպասները: Հաջորդ մրցաշրջանը նա անցկացրեց Սանկտ Պետերբուրգի «Կոսմոս Կիրովեց» թիմում, որը հանդես էր գալիս ՌԴ առաջնության 2-րդ խմբում: Այստեղ նրա խաղն արժանացավ «Զենիթի» մարզիչների ուշադրությանը եւ 20-ամյա Բերեզովսկին հրավիրվեց Սանկտ Պետերբուրգի գլխավոր թիմ: «Զենիթում» Բերեզովսկին 1994-2000-ին ընդհանուր առմամբ ՌԴ առաջնություններում անցկացրել է 122 խաղ, բաց թողել 121 գոլ: 2001-ին Բերեզովսկին տեղափոխվեց Մոսկվայի «Տորպեդո»՝ 19 խաղում բաց թողնելով 26 գնդակ: Իսկ 2006-ից նա պաշտպանում էր մերձմոսկովյան «Խիմկիի» դարպասը: Մարզական իր կարիերայում Ռոման Բերեզովսկին Հայաստանի եւ Ռուսաստանի առաջնություններում ընդհանուր առմամբ անցկացրել է 442 խաղ, որոնցից բաց է թողել 533 գոլ:

## Հաղթեց Շորթը, իսկ ամենաբարձր պարգեւավճարը ստացավ Հոու Յիֆանը

Վերջնագիծը հատեց Ջիբրալթարի շախմատի մրցաշարը, որի 256 մասնակիցների թվում էին 3 հայ գրոսմայստերներ: Առավել հաջող հանդես եկան Սերգեյ Մովսիսյանն ու Գաբրիել Սարգսյանը, որոնք վաստակեցին 7-ական միավոր: Լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով, Մովսիսյանը զբաղեցրեց 11-րդ տեղը, իսկ Գաբրիելը հանգրվանեց 21-րդ հորիզոնականում: Ընդ որում Մովսիսյանը մրցաշարի ավարտից 2 տուր առաջ հավակնում էր մրցանակային տեղի, սակայն Դավիթ Հովելի եւ Պյոտր Սվիդլերի հետ պարտիաներն ավարտեց ոչ-ոքի: Իսկ ահա Գաբրիելը հաջող խաղաց վերջնագծում՝ 2 հաղթանակ տոնելով Գրեյգ Հանլեյի եւ Նանա Ձագնիձեի նկատմամբ:

Մրցաշարում հաջող էր հանդես գալիս նաեւ ԱՄՆ-ում բնակվող Վարուժան Հակոբյանը: Սակայն ավարտական տուրերում նա պարտվեց Շահրիյար Մամեդյարովին եւ Ալեքսեյ Կաբրերային, որի պատճառով 6 միավորով նահանջեց 51-րդ հորիզոնական: Նշենք, որ մինչ այդ Հակոբյանն անպարտելի էր:

Մրցաշարի հաղթողը որոշվեց լրացուցիչ մրցախաղում: 8-ական միավոր էին վաստակել աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը եւ անգլիացի Նայջլ Շորթը: Յիֆանը վերջին 2 տուրերում հաղթել էր Ալեքսեյ Շիրովին ու հաշտություն էր կնքել Շահրիյար Մամեդյարովի հետ: Շորթը 2 հաղթանակ տոնեց Սալեհ Սալեմի եւ Քրիշնան Սասիկիրանի հետ պարտիաներում: Իսկ ահա աղյուսակը գլխավորող Մայքլ Ադամսը ոչ-ոքի արդյունքով ավարտեց մրցախաղերը Զոլթան Ալմաշիի եւ Վիկտոր Բոլոգանի հետ ու 7,5 միավորով գրավեց 3-րդ տեղը՝ արժանանալով 10 հազար ֆունտ ստեռլինգի:

Իսկ մրցաշարի հաղթող ճանաչվեց Նայջլ Շորթը, որը արագ շախմատի մրցախաղում 1,5-0,5 հաշվով հաղթեց Հոու Յիֆանին ու արժանացավ գլխավոր մրցանակին՝ 20 հազար ֆունտ ստեռլինգի: Սակայն Հոու Յիֆանի պարգեւավճարն ավելի մեծ էր: Նա 12 հազար ֆունտ ստեռլինգ ստացավ մրցաշարում 2-րդ տեղը գրավելու համար, իսկ կանանցից ուժեղագույնը ճանաչվելու համար էլ պարգեւատրվեց 10 հազարով:

## Եգիպտոսի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը պաշտոնանկ է արվել

**Եգիպտոսի վարչապետ Քամալ էլ Գանզուրին աշխատանքից ազատել է երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի ողջ ղեկավար կազմին «Ալ Մասրի»-«Ալ Ահլի» ֆուտբոլային հանդիպման ավարտից հետո տեղի ունեցած ողբերգության համար: Շուտով ֆեդերացիայի ղեկավարությունը կհրավիրվի դատախազություն՝ ցուցմունք տալու:**

**Ըստ ՖԻՖԱ-ի կանոնակարգի, երկրի կառավարությունն իրավունք չունի խառնվելու ֆուտբոլի ֆեդերացիայի գործունեությանը: Ուստի բացառված չէ, որ ՖԻՖԱ-ն զրկի Եգիպտոսի հավաքականներին եւ թիմերին միջազգային մրցումներին մասնակցելու իրավունքից:**

**Ողբերգության հետեւանքով «Ալ Ահլիի» 3 ֆուտբոլիստներ որոշել են ավարտել կարիերան: Նրանք են Եգիպտոսի ազգային հավաքականի անդամներ Էհմադ Մոտեաբը, Մոհամեդ Աբուտրիկան եւ Մոհամեդ Բարակատը: Հրաժարականի դիմում էր ներկայացրել «Ալ Ահլիի» գլխավոր մարզիչ, պորտուգալացի մասնագետ Մանուել Ժոզեն, սակայն ակումբի ղեկավարության հետ հանդիպումից հետո փոխել է որոշումը ու կշարունակի գլխավորել թիմը:**

## Արա Հակոբյանը թերեւս կհամալրի «Գանձասարի» կազմը

**Հայաստանի առաջնությունների ամենաարդյունավետ ֆուտբոլիստներից մեկը՝ Արա Հակոբյանը, հավանաբար այս տարի հանդես կգա Կապանի «Գանձասարում»: Լիբանանից Երեւան վերադարձած ֆուտբոլիստն արդեն մասնակցել է «Գանձասարի» մարզմանը: Սակայն տեխնիկական խնդիրների պատճառով Արա Հակոբյանը չի մեկնել Սոչի, որտեղ «Գանձասարը» փետրվարի 2-ից ուսումնամարզական հավաք է անցկացնում: Կապանցիների կազմում Սոչի չեն մեկնել նաեւ աֆրիկացի մի քանի ֆուտբոլիստներ, որոնց Ռուսաստան մուտքի թույլտվություն չի տրվել:**

**Արա Հակոբյանն անցյալ տարի հանդես էր գալիս Երեւանի «Արարատում», որի կազմում անցկացրած 11 խաղում 3 գոլ էր խփել: Առաջին շրջանի ավարտից հետո Արան հեռացավ թիմից: Մինչ օրս չի գերազանցվել Արայի մեկ մրցաշրջանի արդյունավետության ռեկորդը: 2003-ին նա «Բանանցի» կազմում 45 գոլի հեղինակ էր դարձել: Այս արդյունքը լավագույնն էր նաեւ Եվրոպայում:**

## Խաղերը կցուցադրվեն Հ1-ով

**ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը «Ֆեյսբուքի» իր էջում տեղեկացրել է, որ Կիպրոսում կայանալիք ՀՀ հավաքականի ընկերական մրցախաղերը ցուցադրվելու են Հանրային հեռուստաընկերությամբ: Հիշեցնենք, որ մեր ընտրանին փետրվարի 28-ին եւ 29-ին Կիպրոսում մրցելու է Սերբիայի եւ Կանադայի հավաքականների հետ:**

## ՖՈՒՏԲՈԼ

## Հաջողությունն ուղեկցեց «Փյունիկին»

**Երեկ ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում ստուգողական խաղ անցկացրին «Փյունիկն» ու «Բանանցը»: Հանդիպման ելքը վճռեց 85-րդ րոպեին «Փյունիկում» փորձաշրջան անցնող Էդգար Հարությունյանի խփած միակ գոլը: Նշված թիմերը «Միկայի» հետ փետրվարի 16-ին կմեկնեն Կիպրոս, որտեղ ուսումնամարզական երկշաբաթյա հավաք կանցկացնեն:**

## «Ուլիսը» մեկնեց Ուռեկի

**Ֆուտբոլի Հայաստանի չեմպիոն «Ուլիսը» երեկ մեկնեց Ուռեկի, որտեղ երկշաբաթյա ուսումնամարզական հավաք կանցկացնի: Թիմի կազմում պարապմունքներին կմասնակցեն 24 ֆուտբոլիստներ: Նրանց թվում են նաեւ թիմի նորեկներ Վահագն Մինասյանը, Արսեն Բալաբեկյանը եւ Արթուր Քոչարյանը:**

**Ուռեկիում «Ուլիսը» նախատեսում է ստուգողական մի քանի հանդիպում անցկացնել: Ուսումնամարզական հաջորդ հավաքը նախատեսված է Անթալիայում:**

## Արթուր Եդիգարյանը փորձաշրջան է անցնում «Խիմկիում»

«Փյունիկի» եւ Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Արթուր Եդիգարյանը մերձմոսկովյան «Խիմկիի» կազմում այս օրերին մասնակցում է Թուրքիայում անցկացվող ուսումնամարզական հավաքին: Նա նորամուտն է նշել Մոսկվայի «Տորպեդոյի» հետ ընկերական խաղում, որում «Խիմկին» հաղթեց 2-1 հաշվով: Եդիգարյանը ժամանակին «Փյունիկից» տեղափոխվեց Իրանի «Պաս» ակումբ: Անցած մրցաշրջանում վերադառնալով Հայաստան, նա մինչեւ առաջնության ավարտը վարձավճարով հանդես եկավ «Բանանցում», որից հետո վերադարձավ «Փյունիկ»:



«Խիմկիում» ներկայումս փորձաշրջան է անցնում նաեւ Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականի պաշտպան Էդուարդ Թաթոյանը: Թիմում հանդես է գալիս ՀՀ երիտասարդական հավաքականի հարձակվող Արտակ Ալեքսանյանը, որը մասնակցեց «Տորպեդոյի» հետ հանդիպման առաջին խաղակեսին:

## Թեթեւատլետները կմասնակցեն միջազգային մրցաշարերի

**Վաղը Մոսկվայում կտրվի թեթեւ աթլետիկայի միջազգային վարկանիշային մրցաշարի մեկնարկը: Հայաստանից այդ մրցումներին կմասնակցեն հեռացատկորդներ Վարդան Փահլեւանյանը եւ Արսեն Սարգսյանը: Վարկանիշային միավորներ վաստակելու համար հարկավոր է հատել 810 սանտիմետրի սահմանը:**

**Հայաստանցի 19 թեթեւատլետներ ուղեւորվել են Իրանի Մաշադ քաղաք, որտեղ այսօր կմեկնարկեն «Արեւածագի 10 օր» անվանումով մարզական ավանդական փառատոնի շրջանակներում անցկացվող թեթեւ աթլետիկայի մրցումները: Մրցանակային տեղերի համար պայքարում սպասելիքները մեծ են հատկապես մեր վազորդներից, ցատկորդներից եւ գնդահրորդներից:**

## Կարինա Համբարձումովան անդրանիկ պարտությունը կրեց

**Մոսկվայի շախմատային փառատոնի 6-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր աղյուսակը գլխավորող Կարինա Համբարձումովայի եւ Թուրքիան ներկայացնող Եկատերինա Աթալիկի մրցախաղը: Սեւերով խաղացող Կարինան անդրանիկ պարտությունը կրեց: Տուրն անհաջող էր նաեւ Ռուսաստանը ներկայացնող մեկ այլ հայ շախմատիստուհու՝ Մարինե Գրիգորյանի համար, որը զիջեց Ինա Իվախինովային: Իսկ ահա Լիլիթ Գալոյանը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով՝ 4,5 միավորով հավասարվեց Կարինա Համբարձումովային ու մտավ առաջատարների խումբ: Գրիգորյանն ունի 4, Կլարա Հունանյանը՝ 2,5 միավոր: Նա ոչ-ոքի խաղաց Անաստասիա Պոնոմարչուկի հետ: Հաշտություն կնքեց նաեւ Եվգենիա Դոլուխանովան, որի մրցակիցը Վլադա Սվիրիդովան էր:**

**6 տուրից հետո աղյուսակը 5,5-ական միավորով գլխավորում են Եկատերինա Աթալիկը, Քսիյան Հուանգը եւ Մարինա Ռոմանկոն:**

**Ուսանող գրոսմայստերների մրցաշարում Ավետիք Գրիգորյանը ոչ-ոքի խաղաց Ալեքսեյ Ռեշետնիկովի հետ եւ 3 միավորով բաժանում է 4-6-րդ տեղերը: Տուրն անհաջող էր մրցաշարի միանձնյա առաջատար Ռեյ Ռոբսոնի համար, որն անդրանիկ պարտությունը կրեց Ալեքսանդր Իպատովի հետ պարտիայում: Դա հնարավորություն ընձեռեց Յարոսլավ Ժերեբուխին եւ Մաքսիմ Մասլակովին միավորներով հավասարվելու առաջատարին: Մասլակովը հաշտություն կնքեց Մուստաֆա Յիլմազի հետ, իսկ Ժերեբուխը հաղթեց Դարիուշ Շվերցին: 7-րդ տուրում Ավետիք Գրիգորյանը սպիտակներով կխաղա թուրք Մուստաֆա Յիլմազի հետ: Ուշադրության կենտրոնում կլինի Ժերեբուխ-Ռոբսոն մրցախաղը:**



*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հեսքերով

# Ինչո՞ւ եք ծիծաղելի դառնում

Ես չգիտեմ, թե ո՞ւմ «հանճարեղ» մտքում է ծնվել «դատապարտյալներին Լեռնային Ղարաբաղում վերաբնակեցնելու» գաղափարը: Բայց ինձ վատ զգացի, երբ ադրբեջանական մամուլում կարդացի «Հայերն ստեղծում են հարավկովկասյան Կոլիմա» խորագրով հրապարակումը (տես՝ www. vesti.az):

Ի՞նչ է նշանակում՝ «դատապարտյալին առաջարկել, որ կամ պատիժը կրի ազատազրկման վայրում, կամ բնակության մեկնի Լեռնային Ղարաբաղ»: Իրոք, մի՞թե մարդիկ կարծում են, որ Լեռնային Ղարաբաղում «ապրելը պատիժ է»: Կամ Արցախի շուրջ 150 000 բնակիչները «դատապարտյալներ են»: Սա ի՞նչ «հայրենասիրություն» է, ի՞նչ մտածողություն:

Ով էլ մտածել է, նա առաջին հերթին վիրավորել է մեզ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներիս: Այդպես չի կարելի: Դա մեր կենսակերպին անհարիր է՝ ինչ-որ հարց լուծել դատապարտյալների միջոցով:

Այդ կերպ Ադրբեջանում էին 1990-ական թվականների սկզբներին կազմավորում ՆԳՆ հատուկ ջոկատներ. նախագահի հրամանագրով ներում էին շնորհում հանցագործներին՝ պայմանով, որ նրանք պետք է զինվորագրվեն «Ղարաբաղի ազատագրման գործին»:

Խոջալուի «պարետ» Ալիֆ Հաջիեւն, օրինակ, պատիժը կրում էր բանտում: Նրան Մութալիբովը ներում շնորհեց եւ ոստիկանության մայորի ուսադիրներով ուղարկեց «վերահսկելու» Արցախի միակ օդանավակայանը: Հաջիեւը հետմահու արժանացել է ազգային հերոսի կոչման: Համացանցում կա Ադրբեջանի ազգային հերոսների լրիվ ցուցակը: Նրանց ճնշող մեծամասնությունը Ալիֆ Հաջիեւի կարգի է կամ վարձկան:

Ադրբեջանական բանակի պարտության պատճառներից մեկն էլ դա է: Եվ, ընդհակառակը, պատերազմում մենք հաջողությունների ենք հասել, քանի որ կռվել են կամավորականներ: Մարդիկ, որ պաշտպանել են իրենց գյուղերը, քաղաքները: Հայրենի հողը: Դրա համար նրանց ոչ ոք չի էլ վճարել: Պետությունը տվել է զենք, հանդերձանք, սնունդ:

Ո՞րն է խնդիրը: Այս հողի վրա ապրող մարդիկ անկախ պետություն են ստեղծել, պատերազմում պաշտպանել ապրելու եւ ազատորեն զարգանալու իրենց իրավունքը: Դա անբեկանելի վճիռ է: Եվ բոլորովին կապ չունի, թե այսօր Արցախում որքան բնակչություն կա: Հարավային Օսիայի նախագահական ընտրություններում բոլոր թեկնածուների օգտին քվեարկեց այնքան մարդ, որքան Ստեփանակերտի քաղաքապետի մեկ թեկնածուին է պաշտպանել:

Եվ ինչ, Հարավային Օսիայի անկախությանը որեւէ մեկը կասկածո՞ւմ է: Իսկ Մերձդնեստրի մոլդովական հանրապետությունը, Հարավային Օսիայից մի քանի անգամ շատ բնակչություն ունենալով հանդերձ, դեռ մնում է չճանաչված: Ո՞վ է հաշվի նստում իրողության հետ, որ Աբխազիայի բնակչությունն այսօր 100 000-ով քիչ է նախկինից:

Խոսել Արցախի ժողովրդագրական «աղետալի վիճակից» այն դեպքում, երբ վերջին 5 տարիներին արձանագրվում է բնակչության կայուն աճ, նշանակում է կամ չտիրապետել փաստերին, կամ... Չգիտեմ: Փաստն այն է, որ պետական բյուջեի միջոցներով ամեն տարի տասնյակ առանձնատներ են կառուցվում 6 եւ ավելի երեխա ունեցող ընտանիքների համար: Նախկինում այդպես չէր:

Ի վերջո, դատապարտյալների միջոցով «վերաբնակեցում կազմակերպելու» գաղափարը վիրավորական է նաեւ այն մարդկանց համար, ովքեր արդեն շուրջ 20 տարի իրենց ճակատագիրը վերջնականապես կապել են այս հողի հետ: Անտեղյակների համար հատուկ ասեմ. ժողովրդագրական ամենաբարձր ցուցանիշներ արձանագրվում են Քարվաճառում, որտեղ բնակչության բացարձակ մեծամասնությունը նախկին շահումյանցիներն են:

Արցախի խնդիրն, այո, համազգային է: Բայց այդ խնդիրն առաջին հերթին լուծում են Արցախում ապրող մարդիկ: Նրանք արժանի են, որ իրենց հարգանքով վերաբերվեն: Իսկ հայկական մամուլը երբեմն այնքան «նախաձեռնողական է դառնում», որ իրական մտահոգություններն իրենց տեղն սկսում են զիջել որոշ մարդկանց անկառավարելի երեւակայությանը:

Վստահեցնում եմ, որ դա գործին ոչնչով չի օգնում: Իսկ երբ երեւակայությունները հարեւան երկրին չարախնդալու առիթ են տալիս, ապա ոչինչ չի մնում, քան ասել. «Ինչո՞ւ եք ծիծաղելի դառնում: Չէ՞ որ այդ դեպքում մենք ստիպված ենք լինում ցավել նաեւ ձեզ համար»:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Հայկական ներկայություն Պորտուգալիայում

**«Պորտուգալիայում մեծ հայկական համայնք գոյություն չունի: Չկա նաեւ հայկական եկեղեցի: Բայց այստեղ՝ Եվրոպայի ամենաարեւմտյան այս երկրում իր հանգրվանն է գտել մեծ բարերար Գալուստ Գյուլբենկյանի արվեստի հարուստ հավաքածուն»: Այս խոսքերով են սկսում իրենց թղթակցությունը «Արմինյն միրոր սփեքթեյթր» թերթում Թալին Բաբայանն ու Կարինե Աբալյանը:**

**«Շրջապատված մարգագետիններով եւ բամբուկի այգիներով՝ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամ-թանգարանը Լիսաբոնի մշակութային կյանքի այն էական հաստատությունն է, որն ամենաշատ այցելուներ է գրավում երկրում: Տարբեր տարիքի արվեստի սիրահարներ հաստատության դահլիճներում կարող են ըմբոշխնել հնագույն դարերից մինչեւ 20-րդ դար ձգվող ժամանակահատվածների ավելի քան 6000 գեղարվեստական ստեղծագործությունների, այդ թվում՝ Ռեմբրանդի, Ռենուարի, Մանեի, Դեգայի, Մոնեի եւ այլոց կտավների, ինչպես նաեւ պարսկական գորգերի եւ չինական կերամիկայի առկայությունը:**

**Գյուլբենկյանը վաղ տարիքում է սկսել հավաքել արվեստի այդ գործերը: 1869-ին Ստամբուլում ծնված հայորդին զավակն էր մեծահարուստ մի վաճառականի, որը կովկասյան նավթահանքերի բաժնետերերից էր: Լոնդոնի «Քինգզ» քոլեջում ճարտարագիտության եւ կիրառական գիտությունների ասպարեզներում մասնագիտանալուց հետո ինքն էլ է ներգրավվել նավթարդյունաբերության ոլորտում:**

**Օսմանյան կայսրությունում 1895-ի հայերի կոտորածների նախօրյակին բրիտանական քաղաքացիություն ձեռք բերելով՝ նա կարողանում է նշանակալի կապեր հաստատել եվրոպացի եւ ռուս գործարարների հետ: 1907-ին օգնում է հիմնել «Հոլանդական արքայական Շել գրուպ» ընկերությունը, իսկ հինգ տարի անց նաեւ «Թըրքիշ պետրոլիում» ընկերությունը՝ իրեն վերապահված հինգ տոկոսի շահաբաժինով: Հետագա ծրագրերում պահպանելով նույն դրույքաչափը՝ նա ի վերջո աշխարհում ճանաչում է ձեռք բերում որպես «Պարոն հինգ տոկոս»:**

**Երկրորդ համաշխարհայինի օրերին ծրագրում է մեկնել Միացյալ Նահանգներ, սակայն կարճ ժամանակով չեզոք Պորտուգալիայում գտնվելով եւ արժանանալով ջերմ ընդունելության՝ փոխում է մտադրությունը եւ**



**հաստատվում Լիսաբոնում, որտեղ իր կյանքի վերջին տասներեք տարիները անցկացնում է քաղաքի կենտրոնական մասում գտնվող շքեղ «Ավիզ» հյուրանոցում:**

**Լիսաբոնում է, որ որոշում է միջազգային մակարդակի մի հաստատություն հիմնել ցուցադրելու համար տարիների ընթացքում հավաքած արվեստի ստեղծագործությունները: Նրա երազանքը իրականություն է դառնում 1969-ին՝ 86 տարեկանում վախճանվելուց տասնչորս տարի անց միայն, երբ Լիսաբոնում իր դռներն է բացում հիմնադրամ-թանգարանը, որին կից 1983-ին կառուցվում է Արդի արվեստի կենտրոնը, որը, հիմնականում պորտուգալացի արվեստագետների ստեղծագործությունները պարփակելով, նաեւ պահպանում է այլ երկրների նկարիչների կտավները:**

**Իմանալով այնտեղ տարվող պահպանման եւ վերականգնողական աշխատանքների մասին, Արշիլ Գորկու քույրը՝ Վարդուհին, եւ որդին՝ Կարլենը, նպատակահարմար են գտնում Գորկու կտավների իրենց հավաքածուն նվիրել թանգարանին: Հետագայում Վարդուհին իր կտակում եղբոր ստեղծագործությունների ճակատագիրը հանձնում է հայկական եկեղեցու արեւելյան թեմին՝ Մայր աթոռ Սբ Էջմիածնին հանձնելու նպատակով: Թեմը համագործակցում է «Գյուլբենկյան» հաստատության հետ:**

**Հ. Ծ.**

ՆԱՏՕ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆ

# Պաշտպանության նախարարը՝ Բրյուսելում

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը Բրյուսելում է՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում կայանալիք Աֆղանստանում եւ Կոսովոյում անվտանգության աջակցության միջազգային ուժերի գործողությանը մասնակցող երկրների պաշտպանության նախարարների նիստերին:

Աֆղանստանում հայկական զորախումբը բաղկացած է 45 հոգուց, որից 5-ը հրահանգիչներ են:

Հայկական զորախումբը գտնվում է Գերմանիայի զորախմբի շտաբի հրամանատարության ներքո, եւ նյութատեխնիկական ապահովումն իրականացնելու է գերմանական կողմը: Հայկական ստորաբաժանման հիմնական խնդիրը Կոնդուզ քաղաքի օդանավակայանի անվտանգության ապահովումն է: Նրանց ծառայությունը ներառում է օդանավակայանում եւ դրա անմիջական մերձակայքում պարեկությունների իրականացում, անցակետերի վերահսկողություն:

ՆԱՏՕ-ն հայտարարել է, որ նախատեսում է Աֆղանստանից զորքերը դուրս բերել 2014-ին: Հ. Հ.


## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԱԶԳ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Հարգելի ընթերցող: Սկսվել եւ շարունակվում է «Ազգ» օրաթերթի 2012 թ. բաժանորդագրությունը: Բաժանորդագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այն իրականացնող ներքնշյալ մամուլի տարածման գործակալություններից.**

- Պրես-Ստենդ- (հեռ.՝ 54-41-99, www.armpress.am)
- Հայմամուլ- (հեռ.՝ 45-30-78, կայքէջ՝ www.haymamul.info.am)
- Հայփոստ- (հեռ.՝ 51-47-51, www.haypost.am)
- Պրես-Ատաշե- (հեռ.՝ 27-02-22, www.press-attache.am)
- Բլից Մեդիա- (հեռ.՝ 58-17-13, www.pressinfo.am)
- Թերթին կարող եք բաժանորդագրվել նաեւ Հանրապետության-47 հասցեում գտնվող խմբագրատանը (հեռ՝ 58-29-60, կայքէջ՝ www.azg.am):

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Այն ընթերցողները, ովքեր կներկայացնեն թերթի բաժանորդագրության կտրոնը, իրավունք կունենան ամիսը մեկ անգամ անձնական բնույթի մեկ անվճար հայտարարություն տեղադրել թերթում, որը 1 շաբաթ կտեղակայվի նաեւ էլեկտրոնային կայքէջում:**





# Ցավակցություն

«Ֆլեշ» ընկերության կոլեկտիվը ցավակցում է ընկերության նախագահի Բարսեղ Բեգլարյանին և հարազատներին, սիրելի մոր՝

**ՄԱՆՈՒՇԱԿ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ**

մահվան կապակցությամբ






ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 3.1.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: